

371.1

4-24

1 MAR 201

311.1
4-24

11233

Կ Պ Գ Ա Խ Ա Զ Ե

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԶԱՅՆԸ

Թարգմ. Մ. Տիղա

— — —

Կառաձնե

„Голосъ Сельского учителя“

пер. М. Шеводь.

• 5 100
• 5 100
• 5 100

• •

Թ Ի Ց Լ Ի Ս
ԵՎԵՐԱԿԱՆ ՏՊԱՐԱ ՕՐ. Ն. ԱՌԱԽԵԼԻ, ՊՈԼԻ. 7
1907 (74)

171.1
1-24
№ 370
9046-Ч

ԿԱՊԱՆԱԴՅ



ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻ ԶԱՅՆԸ

Թարգմ. Մ. Տիգեզ

15995

Կառածք

„Голосъ Сельского учителя“

пер. М. Швода.



ԵԼԵՐԵՐԱՆԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Խ. ԱՐԱԽԵԼԻ, ՊՈԼԻՖԵՆԱԿԱՆ 7.

ԹԻՖԼԻՍ

74

117 MAY 2013

47/182

ԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

(Թարգմանչից)

Ուուսաստանի ազատազրական շարժումը իւր բաղմակողմանի ելեէջներով ցնցեց հասարակական բոլոր խաւերը և մոլեգին թափով մղեց նրանց դեպի ներգործական կոիւ:

Հայ հասարակութիւնն էլ, կովկասում և Ուուսաստանում, անմասն չմնաց այդ ընդհանուր հոսանքից և հասարակական-քաղաքական ասպարիզում երեան եկաւիւր ինքնուրոյն դիրքով ու պահանջներով:

Հայ ուսուցչութիւնն էր միայն, որ շնորհիւ իրա անկազմ-անկերպարան վիճակի ու մանաւանդ մի համառուցչական միութեան րացակալութեան, անկարող հանդիսացաւ հրապարակի վրայ գնելու իւր էական պահանջները, իւր աննախանձելի դրութիւնը, իւր ներքին խոցերը և մի կերպ բարւօքելու՝ ինչպէս իրա, այդպէս և հայ դպրոցի աննորմալ, ողորմելի կեանքը:

1906 թ. էջմիածնում գումարւած կենդրոնական ժողովը, գուցէ, կարողանար մի զգալի ծառայութիւն մատուցանել մեր դպրոցին ու ուսուցչութեանը,

Եթէ նա պէտք եղած ուշադրութիւնը կենդրոնացան նէր նրանց շուրջը: Բայց կենդրոնական ժողովը, զրժաղղարար, այդ բանը չարաւ: Նա փոխանակ մեր ցաւերը բուժող «ճարերի» մասին մտածելու մնափառ «ճառերի» ախտով վարակւեց ու... ինչպիսի մութ ճանապարհներով որ կազմւել էր, արդպէս էլ ցրւեց և ժողովրդի քաղցր ակնկալութիւնները մնացին սոսկ երազներ:

Դրանից յետոյ կովկասահայ մամուլին էր վերապահած արծարծել մեր այդ այժմէական հարցը. սակայն այսաւեղ էլ, բայցի երբեմնակի պղաստոնական արտայայտութիւններից գէպի ուսուցչութիւնն ու դպրոցը, մի լուրջ վերաբերմունք չտեսանք: Եւ ինչպէս կարող էր լուրջ վերաբերմունք տեղի ունենալ, երբ սունկի նման բուննող հայ օրաթերթերն ու շաբաթաթերթերը խելառ յանդկնութեամբ զբաղւած էին և ներկայումս էլ դեռ զբաղւում էն միմեանց հայույերով, ինսինուացիներով, մատնութիւններով և... իրենց գժբաղդ ընթերցողների մտքերն անբարոյականացնելով:

Էլ ո՞վ պէտք է մտածէր հայ ուսուցչի, հայ զրաբրոցի մասին:

Հասարակութիւնը: Աւաշ, մեր ժողովուրդն էլ մի կողմից բնութեան և բոնութեան արհաւելքներին ենթակայ և միւս կողմից անթափանցելի տղիւաթեան մէջ խարխափելով, նա էլ աչքաթող է ա-

րել ժողովրդների ճշմարիտ յառաջադիմութեան այդ աղղակները:

— Պետութիւնը, դուքէ մտածի ընթերցողը: Սակայն այժմ ժեռ քարն էլ գիտէ, որ բռնակալ կառավարութիւնների համար որքան աղէտ կըմնայ ժողովրդական լայն զանգւածը, այնքան էլ գոհ և երշանիկ կզգան նրանք իրենց զիրքերում...

— Իսկ հողերականութիւնը, որ այնքան յարմարութիւններ ունի զբաղւելու մեր այդ հիւանդոս կողմով:

Է՛հ, այդ մասին մտածելն անգամ յանցանք կըլինէր մեր կողմից:

Արդ. Ֆնում է, որ հայ ուսուցչութիմնն ինքը գիտակցի իւր շահերը և լուրջ կերպով մտածէ իւր անելիքների մասին:

Այդ տեսակէտից, սիրում եմ յուսալ, որ մի կարեւոր ծառայութիւն կրմատուցանի հայ ուսուցչութեամբ ներկայ գրքոյիւ:

Հեղինակը, պ. Կապանաձէն, այնպիսի կենդանի և հշգրիտ գոյներով է նկարագրում զիւղական և առհասարակ ժողովրդական ուսուցչների արդի վիճակը, որ կարգալով ներկայ գրքոյկը՝ մարդ յակամայից վեցում է նահատակ հայ ուսուցչի և ուսուցչուհու առօրեայ կեանքը իւր բոլոր գառնութիւններով, բոլոր արգահատելի կողմերով:

Եթէ պ. Կապանաձէն սոսկում է ուսւ ժողովրդական ուսուցչի, համեմատաբար, աւելի բար-

ւոք տնտեսական կացութեան հանդէս և յուսահատ շեշտով բացականչում է.

— «Ասացէք, ինչպէս չըլքոի այսաեղ ուսուցիչը, ինչպէս չըլքարի ամեն բանից, չըզրկոի բոլոր աշխոյժից և ընդունակութիւններից».—

Ի՞նչ կասէր նա, եթէ իմօտոյ ծանօթ լինէր հայ գիւղական ուսուցչի իսկապէս անտանելի վիճակի հետ:

Ի՞նչ կասէր նա, եթէ ուսումնասիրած լինէր այն դժոխային պայմանները, որոնց մէջ ստիպւած է գործել հայ գիւղական ուսուցիչը և մանաւանդ ուսուցչուհին:

Օրական 8—12 ժամ անբնդհատ պարապելով կրողիս, անտաշ, օտարախօս մանուկների հետ, հայ գիւղական գալրոց կոչւող մութ, խոնաւ, բոլոր յարմարութիւններից միանգամայն զուրկ, կիսախարխուր ափսոսի ապականւած մթնոլորտում, ենթակայ կիսավայրէնի գիւղացու անհանդուրժելի արարքներին, մնւելով այնպիսի կերակրներով, որպիսին խոզն անդամ կըդամարւէր լափել և իլրումն ամենայնի բաւականանալով տարեկան 100—300 րուբլի վարձատրութեամբ՝ այն էլ յանախ լիովին չատանալով... Ահա՝ ձեղ կեանք:

Հայ ուսուցչի և ուսուցչուհու գառն վիճակը նա՛ միայն կրհասկանայ, ով գժրաղղութիւն է ունեցել հաշակելու այդ թունաւոր դառնութիւնը, ով երբ-

ևիցէ ուսուցչական պաշտօն է վարել հայ գիւղական դպրոցներում:

Տասնեակ տարիներից ի վեր իմ սեփական կաշւի վրայ փորձած լինելով այդ բանը, ևս եկել եմ այն վհատեցուցիչ եղբակացութեան, որ մեր մատաղ սերնդի կրթութեան գործը երբէք չէ կարող լառաջադիմել և ծառայել իրա իսկական կոչմանը, քանի գեռ գոյութիւն ունին այսօրւայ պայմանները, քանի գեռ լուրջ կերպով չի մտածւիլ այդ պայմանների հիմնական բարեփոխութեան մասին:

Մեր գիւղացիք նիշտ նոյն աչքով են նայում իրենց նահատակ ուսուցչին, ինչպէս միջնադարեան աւատական իշխաններն էին նայում իրենց նորտերի վրա: Հայ ուսուցիչը պարտաւորւած է լինել հլու կամակատարը գիւղացի անդրագէտ աղայի բոլոր նրավաստացուցիչ կապրիզների. նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի շարժական կամագուրկ իր, որին իւր կամքի ուղած կողմն է քշում համբակ գեղջուկը և տրաունչի, բողոքի, պահանջի ոչ մի շշուկ չպէտք է լսւի՝ լիովին իրաւագուրկ հայ ուսուցչի և սւսուցչուհու շրթներից, հակառակ դէպքում... նանապարհը բաց է!

Աւելի ևս տիսուր գոյներով է ներկայանում մեզ մանաւանդ տաճկահայ գաղթականների նոր գաղթավայրելում (Սև ծովի ափերում, Ղրիմում, Կուբանի նահանգում և այլն) պաշտօնավարող հայ գիւղական ուսուցչի պատկերը:

Ցաւալի է լիշելն անգամ, որ այդ ասպարիզում



ոչ-նւազ բացասական դեր են խաղում և հայ յեղափոխական կազմակերպութիւններից մի քանիսը, մասնաւոնդ դաշնակցականները, որոնք յաճախ գիւղական ուսումնարանը դարձնում են իրենց թայֆայական խելառութիւնների ասպարեզ ու այդպիսով զիտակցաբար հայ գիւղական ուսուցչին դնում առանց այն էլ վատթարագոյն պայմանների մէջ: Յաճախ գիւղական ուսուցիչը դարձնում է այս կամ այն ենիչերի կօմիտետի կրաւորական գործակալը և մէջտեղ տուժում է ինքը կրթական գործը:

Այդ կարգի „յեղափոխականները“ մոռանում են, որ գալրոցն ու մանկավարժութիւնը ունին իրենց առանձին վսեմ միստիան և որ քաղաքական կազմակերպութիւնները իրաւունք չունին գալրոցական և մանկավարժական գործը դարձնել իրենց նեղիկ, զրծուժ շահերի ու շահատակութիւնների ասպարեզ...

Մեր նորագոյն մամուլի էջերը յաճախ զարդարում են սյնալիսի առասպելական գոհարներով, որ մարդ մի ըոպէ մնում է ափիբերան ապշած...

Այդ և նման տիսուր երևոյթների վրայ երկար կանգ առնելը մեղ շատ հեռուն կրտանի, ուստի և ես բաւականանում եմ այդ թուուցիկ ակնարկներով և վերջացնում եմ իմ երկու խօսքն այն ակնկալութեամբ, թէ հայ ուսուցչութիւնն էլ վերջապէս կրոմթափւի խոր քնից, կը թափանցէ ժամանակակից դարի հոգու խորին ծալքերը և ամեն միշոց ծեռք կառնէ գուրս գալու իրա արդի դրութիւնից:

Բարձրացնել հայ ուսուցչին ու հայ գալրոցը իւր ընկած վիճակից, կրթական գործը դնել նպատակայարմար հիմունքների վրայ, զարկ տալ ժողովրդական լայն զանգւածի լուսաւորութեան գործին, —նշանակում է հիմնաւորապէս օգնել հայութեան ապագայ յառաջշաղացութեանը:

Եւ գա մեզանից իւրաքանչիւրի նւիրական պարտականութիւններից մին պէտք է լինի:

Մ. Տ. ՇենՏ.

1907 թ. Ապրիլ 30.
Թիֆլիս.

ՏԵՂԻՆԱԿԻ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Ներկայումս երբ մեծից սկսած մինչև փոքրը,
առանց ազգի, դասակարգի և սեռի խարութեան համարձակ յայտարարում են իրենց կեանքի բարեփոխութեան անհրաժեշտութիւնը՝ գիւղական ուսուցիչները,
ժողովրդական բարօրութեան այդ աղբիւրները, լրում են։ Կարծես նրանք գոհ են իրենց վիճակից։

Այնինչ Ծուսաստանում ոչ ոք այնպէս ճնշւած ու թշւառ չէ, ինչպէս գիւղական ուսուցիչը, բոլոր պետութիւնների ժողովրդական կրթութեան այդ պատաստողները։

Գիւղական ուսուցիչների վրայ դրւած են խիստ ծանր պարտականութիւններ, բայց շատ քիչ բան է տրւում նրանց։

Տաժանելի աշխատանքի և ահազին պատասխանատութեան հետ՝ իրաւագրկութիւն, ողորմելի, ամենանւաղական վարձատրութիւն և կատարեալ անապահովութիւն, ինչպէս ներկայի այդպէս և մանաւանդ նրանց ապագայի վերաբերմամբ։

Նրանք բառի բուն նշանակութեամբ սարուկնե-

րըն են, եթէ կարելի է այդպէս ասել, մեր կրթական գործի, մեր դպրոցների։

Շատերը, նոյն իսկ ուսուցչութեան համար պատրաստւած, հենց որ կարողանում են ծեռք բերել որևէ պաշտօն այլ ասպարիզում և եթէ չեն վախենում զինւորազրութիւնից՝ առանց երկար բարակ մտածելու, հրաժեշտ են տալիս ուսուցչական ասպարեզին, որովհետեւ ուսուցիչը ոչ ապագայ ունի և ոչ էլ որևէ դիրք։

Անհամեմատ աւելի ցածր բնոյթով այս կամ այն գործը, որ ոչ կրթութիւն է պահանջում մարդուց, ոչ աշխատանք և ոչ էլ բարոյական պատասխանատութիւն, —աւելի լաւ է վարձատրում քան գիւղական ուսուցչի բարձր և պատւառոր կոչումը», որը պահանջում է որոշ պատրաստութիւն, կրթութեան, արեւեստի և անձնւիրութեան հետ նաև բարյական ծանր պատասխանատութիւն։

Սակայն այստեղ էլ, անտարակոյս, այդ երեսյթըն արգարացնում են նրանով, որ թէկ ուրիշ աւելի համեստ գործեր բարձր են դնահատում, բայց չէ որ ուսուցիչն աւելի բարձր ոչ-նիւթական վարձատրութիւն է ստանում պետական և հասարակութեան տւած օգուաների գիտակցութեամբ։

Այդպէս դատելը շատ հեշտ է և գեղեցիկ։
Բայց, ախար, մեր գրութիւնն իսկապէս աննա-

Խանձելի է և դա շատ տղեղ երեսյթ է մեր յառաջադիմութեան գործում...

Պարզ բան է, որ այսպէս թէ այնպէս անհրաժեշտ է բարւօքել մեր ուսուցիչների նիւթական վիճակը և որքան կարելի է շուտ:

Մեր ժողովրդական գալրոցների համար, ի հարկէ, նշնքան համելի չպէտք է լինի այն ուսուցիչը, որ յարատե չի պաշտօնավարում, որքան և քաղցած ուսուցիչը:

Թէ առաջինը և թէ վերջինը վատ ուսուցիչներ են:

Գիւղական ուսուցչի աշխատանքն ամեն տեղ էլ ծանր է, բայց հարիւրապատիկ աւելի ծանր է այն ուսուցչինը, որը օտարախօս դպրոցներում, ծայրերներում, բացի իւր ուղղակի նպատակներից գեռ պարտաւոր է պատւաստել մանուկների ուղեղին մէջ և պետական լեզուն:

Այդ ուսուցիչների տաժանելի աշխատանքի մասին գաղափար կազմած կը ինի նա՛ միայն, ով ստիթէ ունեցել սովորեցնելու ուղղակի մանից պոկւած երեխաներին և ո՛չ նրանց, որոնք արդէն քիչ ու միշտ սովորել են մի տեղ, կամ քաղաքներում ու աւաններում ապրողներին, որտեղ ինքը մթնոլորտը պարունակում է իւր մէջ կրթիչ տարրեր և կրթութիւն ձեռք բերել ցանկացողը բերանը բաց ու խուփ անելով էլ կարող է շատ թէ քիչ կրթել...

1905 թ. փետրւարի 18-ի Բարձրագոյն հրովարտակով բոլոր ոռւս քաղաքացիներին տրւած է վերին աստիճանի կարեոր մի իրաւունք, —բարձր իշխանութեան հաղորդել իրենց «կարծիքներն ու խորհրդագութիւնները» պետական կեանքի բոլոր խրնդիրների վերաբերմամբ: Հրովարտակում որևէ սահմանափակումն մտցրւած չէ, հետևաբար նաև միատեսակ վերաբերում և պատկանում է թէ բարձրաստիճան պաշտօնեային, թէ հասարակ մահկանացուներին, թէ հարուստին և թէ աղքատին, թէ տղամարդուն և թէ կնոջը, —նրանցից իւրաքանչիւրը իւրաւունք ունի ասելու կառավարութեանը այն, ինչ որ ինքը մտածում է գյութիւն ունեցող պետական կարգերի մասին:

Քանի որ իւրաքանչիւր քաղաքացի առանձնապէս ունի այդ իրաւունքը, ապա անշուշտ նոյն իւրաւունքը կունենան և ահազին թւով գիւղական ուսուցիչները, քանի որ նրանց կարծիքները, որպէս ամենից աւելի ժողովրդին մօտիկ գանւողների, աւելի մտածւած և աւելի էլ հիմնաւոր կը ինին:

Մենք բոլորս համարեա, գիւղական ուսուցիչները և ուսուցչուհիներս, ապրում ենք գիւղացիութեան մէջ, որը կազմում է պետութեան իսկական պատւարը: Մենք ի մօտոյ ծանօթ ենք նրա կեանքին, կարիքներին և պահանջներին. մէնք բոլորս համարեա ծնւել-սնւել ենք նրա մէջ և ուսման ընթաց-

քումն էլ չենք խղել նրա հետ մեր ներքին կապերն
ու առջնութիւնը:

Ծնորհիւ այդ հանգամանքի էլ, ահա, մեզանից
իւրաքանչիւրը, ով փոքր ի շատէ հետևել է գեղչկա-
կան կեանքի ընթացքին, պէտք է զիտենայ, թէ ինչ-
պիսի տեղական և ընդհանուր պայմանների ծնունդ
է գիւղացութեան անվտան վերաբերմունքը դէպի
պետութիւնը և թէ ինչպիսի միջոցներով կարելի է
վերացնել կամ դէթ մեզմացնել այդ երևոյթը:

1906 թ. Քութայիս.

«Կըթութիւնը հասարակաց բա-
րօրութեան ամենահաստատուն, խա-
րիսխն է»:

Վաշինգթոն.

Պետութեան գործերի մէջ ոչինչ այնքան բարձր,
լուրջ և կարևոր չէ, որքան ժողովրդի լուսաւորու-
թեան սուրբ գործը: Որքան խօսել-զրւել է մինչեւ
այսօր ժողովրդի լուսաւորութեան գործի յառաջա-
դիմութեան համար, որքան լրագրական և այլ վե-
ճեր են տեղի ունեցել:

Եւ ի՞նչ ենք արել իրապէս, ի՞նչ ունինք այսօր:
Քիչ, շատ քիչ բան: Համարեա ոչինչ:

Այնինչ ում յայսնի չէ, որ մարդու տնտեսական
բարեկեցութիւնը (մեր երջանկութեան այդ հիմնա-
քարը) բարգաւանում է նրա մտաւոր զարգացման
համեմատութեամբ. այստեղ էլ, ահա, առաջին ազ-
գակն հանդիսանում է ժողովրդական դպրոցների ա-
մենուրեք բացելն ու շատացնելը:

Քաղաքակրթւած երկրներում վաղուց արդէն
ըմբռնել են՝ ժողովրդական կրթութեան ազգեցու-
թիւնը մարդկային յառաջադիմութեան բարեշրջման
վրայ:

Մեր ինտելլիգենցիայի մի մասը մինչեւ այսօր էլ
այնուամենայնիւ չի ուզում ըմբռնել այն, որ որքան

էլ և բարձրանայ մեր հասարակութեան «կուլտուրական» մասերի մտաւոր զարգացումը, սակայն էլի այն ժամանակ միայն կարելի կը լինի մեր երկրն անւանել լուսաւորւած ու քաղաքավիրթ, երբ դրա հետ դուդնթացարար բարձրանայ համապատասխան չափերով և ժողովրդի զարգացման մակերևոյթը:

Հակառակ դէպօւս զարգացած ինտելիգենցիան «կրդառնայ մի խղճալի օւազիս» ամայի անապատում, մի օւազիս, որ ոչնչանում է այդ անապատի ամայութեան մէջ։ Այդ ինտելիգենցիայի բոլոր նախաձեռնութիւններն ու չանքերը՝ իրեն շրջապատելու քաղաքակրթութեան ու բէֆօրմների բարիքներով՝ կը մնան անպատուզ և անհետեանք։ Այդպիսի ինտելիգենցիայի գրյութիւնն անդամ նման կը լինի այն քնքոյշ ծաղկին, որը կարող է ցրտահար լինել կամ թառամել այնպիսի չնչին մի պատճառից, որպիսին է լուսամուտի պակու չարդւելը։

Դրա ամիսյատ ապացոյցները վիստում են մեր շուրջն ամեն օր։

Վերջին քսան տարիների ընթացքում թէ մեղանում—կովկասում—և թէ կենդրոնական Ռուսաստանում ահագին փորձեր են եղել ևրոպական կեանքը մեր մէջ պատւաստելու համար։

Թէև դրա անյաջութիւնը կսիւած է եղել, որոշ չափով, լիշեալ կեանքի կերպերի թերութիւններից, սակայն ամենամեծ պատճառը արդիւնք է մեր հասարակական և ժողովրդական զարգացման

ցածր աստիճանին։ Զարգացած հասարակութիւններն յանախ կարողանում են վերացնել իրենց թերութիւնները և ինքնազործունէութեամբ ու յամառ հետևողականութեամբ հասնում են իրենց նպատակին, բարօրութեան գործն հասցնելով իր վախճանին։ Իսկ մեզանում մենք տեսնում ենք հեղդ բաւականացումը եղածով և նոյն իսկ կատարեալ անտարբերութիւն դէպի եղածը։

Քաղաքային կամ գիւղական ինքնավարութիւններից օգտուելու մեր եղանակը և այն միջոցները, որով օգտուում են ներքին նահանգներից շատերը «զէմսիք» բարենորոգումներից,—փառաւոր ապացոյցներ են մեր ասածի։

Փոքր ի շատէ հասարակական զարգացման տէր երկրներում, օրինակ Փրանսիայում, տղիտութեան և խաւարի կողմնակիցները խիստ յաջող կերպով օգարվում են իրերի այդ գրութիւնից, որպէսզի մասսայի աղիառութեան վրայ յենւած՝ ճնշեն և այն մտաւոր զարգացման աստիճանը, որին հասել է ինտելիգենտ փոքրամասնութիւնը։ Առ հասարակ որևէ երկրի հասարակական կեանքը կտարելագործել և բնական հանապարհով ընթանալ չէ կարող, քանի զեռ երջանիկ ինտելիգենտների փոքրամասնութիւնը իւր բոլոր աւիւնով գուրս չի գալ տղէտ ու իրաւագուրքի մասսային կրթելու, զարգացնելու և իւր բարձրութեան հասցնելու համար...

Ահա թէ մայրաքաղաքի լրագիրներից մին ինչ-

պիսի եռանգով է յանձնարարում տարածել ժողովրդի մէջ կրթութիւն և լուսաւորութիւն, որպէս միակ միջոց զիւղական տնտեսական կեանքի բարելաւման և մեր մէջ աւելի բեղմնաւոր կուլտուրայ մրացնելու:

“Մեր օրերում—ասում է լրագիրը,— կրթութիւնը այն հիմնական զէնքն է, որով զյանում է ամեն մի յառաջազիմական շարժում արդիւնաբերական բոլոր նիւղերում, սկսած զիւղատնտեսութիւնից, որով արագացնուում և հեշանում է կապիտալի կուտակումը—տնտեսական ամրութիւնից բարգաւաճող ձեւերին անցնելու անհրաժեշտ պայմանը,—որով, վերջապէս, արդիւնաբերութեան հիմքը կազմող աշխատանքը բեղմնաւորուում է և դառնում անհամամատ աւելի արդիւնառատ:

Եթէ ոչ-հեռու անցեալում աղերը կարողանում էին եօլա դնալ տուանց ժողովրդական լայն զարգացման, երբ իւրաքանչիւր ժողովուրդ ապրում էր, այսպէս ասած, ինքն իրան, սակայն այժմ, երբ մըրցութեան ալիքը գրաւել է բովանդակ աշխարհը և ազգերի մըրցումը մուտք է գործել աշխարհի ամենահեռաւոր անկիւններն անգամ,—այժմ, ասում ենք, յաղթութիւնը պատկանում է նրան, ով զինւած է այդ հիմնական դէնքով—կրթութեամբ:

Գերմանիայի, Միացեալ նահանգների, ծագոնիայի կենդանի օրինակները այդ են ասում մեզ:

Ինչպէս որ արտաքին պահպանութեան համար

անհրաժեշտ է նիւթական զօրութիւնը՝ զօրքը, այդպէս և դեռ էլ աւելի անհրաժեշտ է մեր օրերում կուլտուրական զօրութիւնը, ամբովզ երկրում լայն տարածւած կրթութիւնը:

Եւ եթէ մենք կանգ չենք առնում այդ առաջին անհրաժեշտութեան առաջ, ապա էլ աւելի բանականութիւնը պահանջում է չխնայել և ոչ մի միջոց-ժողովրդի զարգացման, ներքին ոյժի աղբիւրին համար, որովհետև կրթութեամբ է ապահովում և երաշխառարւում սպառման քանակը, հարստութիւնը, ժողովրդի բարեկեցութեան յառաջազիմութիւնը, այսինքն այն ամենը, ինչ որ խրախուսում է ժողովրդի գործնական եռանդը, ծնում ժողովրդի մէջ բաւականութիւն, ապահովում երկրի ներքին խսդաղութիւնը և արտաքին յաղթանակը համաշխարհային մըրցութեան ասպարէզում»:

Այլևս ոչինչ չարժէ աւելացնել մեր կողմից, որովհետև լրացրի այդ խօսքերից զուտ նշմարտութիւնն է բուրում:

Արդ, մի բարէ թողնենք ժողովրդական զանդաւածի կրթութեան և զարգացման օդտակարութիւնը մի կողմէ, որովհետև հին աֆորիզմը թէ ֆրանսուգերմանական և Աւստրօ-Պրուսական պատերազմներում դպրոցի ուսուցիչն յաղթեց՝ կրթնայ անժխտելի նըշմարտութիւն:

Նոյն այդ նշմարտութիւնը մենք փորձեցինք մեր սեփական կաշւի վրայ՝ դեռ նոր վերջացած ուռանա-

պոնական պատերազմի մէջ, որտեղ ճապօնիան, մի
բուռն աննշան ժաղովուրդ—փառաւորապէս յաղթեց
մեղ իւր ուսուցիչների և գպրոցների շնորհիւ:

Թէև այդ այլպէս է, սակայն մի փոքր հեռու
գնանք և աեսնենք, թէ ի՞նչպէս է գնահատում մե-
զանում այց «յաղթողը»—ուսուցիչը: Յուսով եմ, որ
ընթերցողը չի բողոքիլ մեր դէմ, եթէ մենք մեր զը-
րոցը մի փոքր կընդարձակենք

Մարդիկ իրաւացի են, երբ աննախանձելի են
համարում գիմնազիայի ուսուցչի կեանքը, որը մինչև իւր
ծերութիւնը առանց ուշք դարձնելու եղանակին, իւր
քայլերն ուղղում է գէպի մասպալաղ դասերը, մե-
ծաւ մասամբ առանց յառաջադիմելու լոյսի:

Սակայն համեմատեցէք այդ կեանքը գիւղական
ուսուցչի զրութեան հետ և գիմնազիայի ուսուցիչը
կըթի ծեղ երջանիկ ու բաղդաւոր: Վերջինս ապ-
րում է մեծ քաղաքներում, կարդում է բոլոր թեր-
թերն ու հանդէսները, ամեն օր տեսակցում տաս-
նեակ ընկերների հետ, մտքեր փոխանակում, խորհր-
դակցութիւնների ժամանակ ասում, խօսում, վիճում,
բացատրում, ամէն տարի, համարեա հնարաւորու-
թիւն ունի դասարանը փոխելու, նոյնիսկ երբեմն էլ
զբաղմունքի առարկաները փոխելու: Նրա կեանքը
փարթած չէ, բայց ընտանիքն էլ խօ չքաւորութեան
մէջ չի տառապում: Նա կարող է տարէնը երկու-ե-
րէք անգամ իւր կնոջ հետ յաճախել ներկայացումներ
և համերգներ: Իւր որդոցը նա տեղաւորում է գիմ-

նաղիայում և նրանց դաստիարակութիւնը համեմա-
տաբար աժան է նատացնում:

Իսկ ինչ կասէք յետրնկած գիւղին, որը համա-
րեա տարւան կէալ ծածկւած է լինում ծիւնով, որ-
տեղ միակ հասարակական տեղը գինետունն է, որ-
տեղ ամբողջ հասարակութիւնը կաղմւած է կիսա-
հարբած զրագրից, անտաշ-կօպիտ և ինքնահաւան
գիւղապետից, սառվ զլիսով իւր շահերի յետեկց ըն-
կած հոգեորականութեան մի քանի ներկայացուցիչ-
ներից,—ահա այդտեղ է ապրում և գործում ուսու-
ցիւը, շարունակ դասաւանդում այբուբենը և թւա-
բանական պարզ գործողութիւնները:

Ամիսներով ու տարիներով ընկերներին տեսնել
անգում չի կարողանում: Նրա կնոջ զբաղմունքն է
լւայքը և ճաշը: Իւր երեխի համար մի նոր կօշիկ
գնելը ահազին, համարեա անտանելի մի ծախս է նրա
համար.—ասացէք, ի՞նչպէս չըլքւի այստեղ ուսու-
ցիւը, չըեղարի ամեն բանից, չըգրկւի բոլոր աշխոյժից
և ընդունակութիւնից:

Որպէսզի աւելի պարզ ու շօշափելի լինի քամ-
բաղդ գիւղական ուսուցչի զրութիւնը՝ մենք առաջ
կըրերենք այդ մանկավարժների տարեկան ծախսերի
հաշւեկշիռը: Ահա—

Ա. — Սնունդ (այսինքն հաց, միս,
կաթ, իւղ և այլն) օրական մի բուրփ
հինգ հոգու համար, թէև 8 հոգուց
բաղկացած ընտանիքներ էլ շատ կան. 365 ր.
Բ. — Լոյս (մոմ, նութ) ամսական 30

կոպէկ, տարէնը		3 ր. 60 կ.
Դ. — 1/4 ֆունտ թէլ և 3 ֆ. շաքար,		
ամիսը մի բուրդի, տարէնը	12 ր. —	
Դ. — 1/4 ֆ. ծխախոտ, ամիսը 30 կ.,		
տարէնը	3 ր. 60 կ.	
Ե. — Տօնական հագուստ	18 ր. —	
Զ. — Տանը հագնելու (հասարակ) հագ.	7 ր. —	
Է. — Կօշիկ և կրկնակօշիկ իրա համար	7 ր. 50 կ.	
Ը. — Չմեռւսն զլիս. 2 ր., ամառ. 1 ր.	3 ր. —	
Թ. — Կնօշը հագուստ (ինարկէ առանց շէջի)	5 ր. —	
Ժ. — Կնօշը հասարակ հագուստ	3 ր. —	
ԺԱ. — Կնօշը կօշիկ և կրկնակօշիկ	5 ր. —	
ԺԲ. — Երեխաներին հագ. 3-ական ր.	9 ր. —	
ԺԳ. — Երեխաներին մի-մի զյուղ կօշիկ,		
ամիսը 50-ական կոպէկ	18 ր. —	
ԺԴ. Գրի թուղթ, ամիսը 10 կոպ.	1 ր. 20 կ.	
ԺԵ. Գրիչ, թանաք... տարեկան	1 ր. —	
ԺԶ. — Բժշկի և գեղորայքի	15 ր. —	
ԺԷ. — Օճառ, լեզակ, կօշկաներկ, լույշ-		
կի... ամիսը 10 կոպէկ	1 ր. 20 կ.	
ԺԸ. — Մասաւոր սնունդի պաշար	5 ր. —	
ԺԹ. — Իւր մասնագիտութեան վերա-		
բերեալ նոր զրբերի	1 ր. 20 կ.	
Ի. — Չընախատեսած ծախսեր, տարէնը	2 ր. —	
ԻԱ. — Իպաշտօնէ ճանապարհորդելիս		
ճամբաժախը	5 ր. —	
<hr/>		
Գումար	491 ր. 30 կ.	

Մեր դիւղական ուսուցիչներն ստանում են առավելը 450 ր.:

Թէկ վերջիշեալ նախարաշիւր կաղմած է շատ ժամանակով, բայց այնուամենայնիւ էլի տարեկան ծախսերը ծածկելու համար բաց է մնում 41 ր. 30 կոպ., որին լրացնելու ոչ մի միջոց չունի խեղճ գիւղական ուսուցիչը. Իդէպ. պէտք է լիշել, որ 41 ր. 30 կոպէկի վրայ աւելանում է նաև 27 ր. որ վերցնուում է ուսուցչից յօդուտ կենսաթոշակի զանձարանի (60/0) և այլպիսով բացը հասնում է 68 ր. 30 կ.:

Ինչ կը ինի խեղճ ուսուցչի վրութիւնը, եթէ նա ունի նաև զառամեալ ծնողք, որոնք, ինչպէս ասում են, իրենց հոգին են զրել որդու ուղուրին նըրան, կրթութիւն տալիս, յուսալով որ երբ որդին մեծանայ և իրենք ծերանան, իրենց թէկ ութիկունք կրդառնայ ու չի թողնիլ նըրանց քաղցի ճանկերում:

Նա, որ իւր ամբողջ կեանքը նւիրում է մերծաւորների և մասնաւանդ աղքատ ծնողաց որդկերանց կրթութեան և դասախրակութեան գործին, նրա համար ինչը կարող է այնպէս սարսափելի ու անտանելի լինել, եթէ ոչ այն միաքը, որ իւր հարազատ զաւակները կը մնան խաւարի մէջ, զուրկ գիտութեան և լուսաւորութեան ճառագայթներից և որ նրանք էլ կրդնան աւելացնելու դժբաղդ, ողորմելի արարածների լէգէոնը: Ահա թէ ինչո՞ւ խեղճ գիւղական ուսուցիչը, հաղիւ մի կերպ իւր թերմաշ գոյութիւնը

կնօշ հետ քարշ տալով, իւր կաշւից դուրս է դալիս, կեանքը մաշում և մի կերպ աշխատում որդիքը քաղաք տանել ու այնաեղ կրթութեան տալ, այդ գէպում օդնութեան կանչերով և ազգականներին ու ծանօթներին, և ուղակի իրա իշխանութեան, որոնք յանախ ննում են խուզ նրա աղերսների դէմ:

Մեր այդպիսի ընտանիքաւոր գիւղական ուսուցին կարելի չէ նշյնիսկ ալրօնետար անւանել, այդ բառի եւրսպական իմաստով: Մեր ուսուցչի կեանքը, այո՛, պրօլետարից էլ վատթար մի բան է ներկայացնում. նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մարդ, որ գատապարտած է մշտական զրկանքների, քաղցի:

Գիւղական ուսուցչի պաշտօնն սասանծնած օրից նրա ամբողջ կեանքը ներկայացնում է լիովին, անընդհատ, ամենածալրայեղ զրկանքների միշարան, որի հետևանքը լինում է կատարեալ քայլքայումն նրա օրգանիզմի:

Այդ բանը միաբերան խօստովանում են այժմ բոլոր լուրջ ուսումնասիրողները, բոլոր բժիշկները, տեղական և ուսուական մամուլը (ի բաց առեալ ի, հարկէ, պաշտօնական թերթերն ու մինհստրական օրգանները, որոնք հաւատացնում են իրենց ընթերցողներին, թէ երկրում ամեն ինչ բազողակ և լաւ է գնում...):

Մեր գիւղական ուսուցչի սնունդը կազմում են բացառապէս բանչարեղէնը, լորիսն և լանթակը...

Այդպիսի անբաւարար սննդառութիւնը, որ չա-

փաղանց ծանրաբեռնում ու լոգնեցնում է մարտողական սիստեմը և որը չի համապատասխանում օրգանիզմի ամենօրեա սպառմանը, գուցէ մի կերպ տանելի լինէր ֆրանսիայում, տաք կիմայում: Իսկ մեզանում, ուր թագաւորում է չերմախար, այդպիսի սննդառութիւնը բոլորովին անկարող է պահպանել մարդու առողջութիւնը:

Մեր ընտանիքաւոր գիւղական ուսուցիչը միենայն չափի պարապմունքով հաղիւ արտադրում է ֆրանսիացի կամ գերմանացի ուսուցչի արածի կէսրէ էլի, եթէ հաշւի առնենք մեր ուսուցչի սննդառութիւնը, կրզարմանանք նրա աշխատութեան վրայ: Եւրոպալի ուսուցիչը, անշուշտ, չէր կարող անել կէսր այն բանի, ինչ որ անում է մերը, եթէ առաջինն էլ վերջնիս նման կերակրւէր խոտով, լօրիով ու լանթակով:

Էլ զարմանալու ոչինչ չկայ, որ մեր գիւղական ուսուցիչը շնորհիւ այդպիսի սննդառութեան աչքի է ընկնում իրա ֆիզիքական թուլակազմութեամբ. նրա շղերը թցը են, ինքը լուր, տեսքը խոճալի, դիւրաւ ընկնելում է նա և հեշտութեամբ ենթարկւում զանազան ախտերի: Անբաւարար սննդառութեան արդիւնք եղող հոգեկան ննշւած զրութիւնը և ֆիզիքական թուլութիւնը հաղիւ մի կերպ ուի վրայ է պահում նրան:

Ահա մեր ժողովրդական ուսուցչի սովորական կեանքը, մինչդեռ մեր կալւածատէրերն ու արիստոկ-

բասները, պալատների ու դղեակների ճոխութեան մէջ ընկղմւած, չափաղանց շատ ուտելուց են հիւանդանում, նրանք իրենց շներին ու կատուներին աւելի լաւ են խնամում, քան մեր գիւղական ուսուցիչը իրա կնօշ և երեխաներին:

Մարդկային էութեան և առողջապահական ամենասարական պահանջներին բաւարարութիւն ըրտապը (առ ի չգոյէ միջոցների) իւր հետ առաջ է բերում անխուսափելիօրէն և այլ հետեւանքներ, որոնք դառնացնում, թունաւորում են փոքր ի շատէ կըրթւած մարդու կեանքը և վերջնականապէս տապալում նրան:

Հասկանալի է, որ մեր խօսքը «չափաւոր» կեանքի մասին չէ, այլ ամենահամեստի: Մենք գեռ միայն ֆիզիքսկանի մասին էինք խօսում: Այժմ մի փոքր հեռուն դնանք և ծանօթանանք ու սուցչական կեանքի միւս կողմերի հետ:

Ենթալրենք թէ ժողովրդական դպրոցների տեսուցը կամ վերատեսուչը եկել է քննութեան: Իհարկէ այդ միջոցին գիւղում մեծից մինչև փոքրը իրար են անցնում կամ, ինչպէս ասում են, մարդոց լեզուն կուկորդն է փախչում»: Ուսուցչին տիրում է սասատիկ յուղունքը. հէնց որ տեսուչը մտնում է, մեր ուսուցիչը դառնում է մի խրտւկակ և բայի «ձերդ... ութիւնը» բառերից ոչինչ չի դուրս դալիս նրա շրթներից, այլ ևս ոչ խրախոյսն է օգնում և ոչ էլ նկատողութիւնները...

Նա այդ բոպէին նման է մի ապուշի. Նա մոռանում է և չի կարողանում արտասանել այն, ինչ որ շատ լաւ իմանում է. իսկ եթէ սկսում էլ է մի բան պատմել, նորան այնպէս է թւում, որ կարծես իւր խօսքերով նա մեղանչում է լողիների գէմ...

Իսկ ագէս գիւղացին այդ տեսարանի հանդէպ կորցնում է իւր յարդանքն ու վստահութիւնը գէպի նա, չնայած որ նա զիւղացու ողջակէցն է, նրա զոհք: Միւնցն բանը յանախ անդրադառնում է և մանուկների վրայ...

Մեղ կարող են առարկել, թէ կրթւած ու զարդացած մարդը կարող է մի ճար անել՝ մասնաւոր դասեր գտնել, միջնակալրդ գպրոցների համար պատրաստել և այլն: Բայց դրանք հազւագէպ և պատահական բաներ են ոչ թէ գիւղերում միայն, այլև բաղաքներում...

Թէկուզ հոգիկ գուրս դայ, քեզանից չոկ ոչ ոքի վրայ լոյս դնել չես կարող:...

Որ կողմից էլ և նայենք ինդրին, միակ ելքը մնում է ոռնիկն աւելացնելու մէջ:

Երբ խօսք է լինում ժողովրդական երկու սեռի գաստիւրակների ոռնիկն աւելացնելու մասին, սովորաբար նկատում են, թէ ուսուցչական դբաղմունքը կարճատև է, որ ուսուցիչները պարապում են, առներից և արծակուրդներից դուրս, ոչ աւելի քան տարւան $\frac{2}{3}$ մասը:

Մասամբ այդ ուղիղ է: Մեզանում դպրոցի պա-

բարպմունքներն սկսում են սեպտեմբերի 1-ից, իսկ Ռուսաստանի ներքին նահանգներում՝ հոկտեմբերի 1-ից, կամ աւելի ճիշտն առաջ՝ իսկական պարապմունքները մեզանում սկսում են հոկտեմբերի 1-ից և Ռուսաստանում նոյեմբերի 1-ից ու վերջանում մեզանում մայիսի վերջերը, իսկ ռուսաստանում ապրիլի վերջերը։ Եթէ դրանից դուրս գցենք կիրակի և տօն օրերը և ծննդեան ու զատկական արձակուրդները, իրօք, կատացէի $\frac{2}{3}$ տարուց ել պակաս։

Բայց խօ ամեն աշխատանք մէկ չէ։

Մէկն աշխատում է ամբողջ տարին և յօդնութիւն չի զգում, այնինչ միւսը տարւայ կէսն հանգստանում է և էլի վեց ամսեայ պարապմունքը նրան ուժասպառ է դարձնում։

Ով իւր կեանքում թէկուղ մի անգամ մտել է գիւղական ուսումնարանը, նա կիմանայ թէ եռանդի և ոյժի ինչպիսի լարումն է պահանջում գիւղական ուսուցչի գործը։

Զնայած որ մեզանում վաղրւց ընդունւած է՝ մի ուսուցչի 60-ից աւելի աշակերտ չափանիկ, բայց իրականութեան մէջ յանախ 80-ից ել է անցկենում։ Կարծում էք հեշտ բա՞ն է մի մարդու համար պարարապէլ 70—80 աշակերտի հետ, գպրոցի խղլւած մթնոլորտում, ոյժերը լարած։

Սովորական պարապմունքն սկսում է առաւօտեան 8 ժամից և շարունակում մինչև յորեկւան 3—4 ժամից 3—4 ժամ էլ գնում է աշակերտների

տետրակիները նայելու վրայ, միւս օրւայ գասերը պատրաստելու և այլնի համար։ Ահա թէ ինչու մեր ուսուցիչներն ու ուսուցչուհիները (մանաւանդ վերջինները, շնորհիւ իրենց թշլ կազմւածքի) ծառայելով ընդամենը 7—8 տարի, սպառում են իրենց Փիղիքակառ ուժի մեծագոյն մասը։

Նշանաւոր Պետականկօֆերը մի անգամ ուղեց սառուղել այն վնասակար աղղեցութիւնը, որ գործում է դպրոցն ուսուցչի վրայ։ Կարլ Ռէկլամը գտաւ նրա նպատակին համապատասխան մի փաստաթուղթ սաքսոնտկան բէկրուտի եռամեաւ ցուցակադրութեան մէջ (1852—54 թ. թ.)։

Ամեն կարգի 206 ուսուցիչներից միայն $4^0/0$ էր պէտքական, ասում է Կ. Ռէկլամ, այսինքն Փիղիքապէս առողջ, 8 տոկոսը՝ աւելի պակաս, իսկ ընդհանուր թւի 87 սարսափելի տոկոսը բոլորովին անպէտք ծառայութեան։ («Հանրամատչելի մանկավարժութիւն», հեղ. Կարլ Ռէկլամի, Երև 77)։

Միայն նիւթական միջոցների սղութիւնն ու սէրն է գէպի գործը, որ ստիպում են ուսուցիչներին մնալ իրենց պաշտօններում երկար տարիներ, առանց ուշք գարձնելու գժրաղղ հանգամանքների վրայ։

Լրացուցիչ կենսաթոշակը, կամ աւելի ճիշտն ասած, մեր թոշակարկը խիստ ուշ է մուտք գործել մեզանում և մեր երկար մանկավարժներից շատերը չեն ենթարկելում թոշակարկի տրամադրութեանը, նրա կանոններին, որոնք, իդէպ, բաւական խղճալի են։

Ծառայած տարիները, արկղի հիմն, ելուց առաջ, հաշւի չեն առնւում և կորչում են ապարդիւն։ Բայց դա էլ ոչ այլ ինչ է, թէ ոչ ծերութեան օրերում մի մուրացիկի տոպրակ՝ խորհառոր այն խիստ ծանր բայց միշտ արդիւնաւոր աշխատանքի, ինչպէս հասարակութեան ալգութիւն և պետութեան ուղուրին։

Այդ բոլորը—թէ ուս. աշխատանքը, թէ ծառայութեան պայմանները, թէ նիւթական անապահով կացութիւնը խանճարում են ուսուցչական կեանքի փոքր ի շատէ կանոնաւոր ընթացքը, մանաւանդընտանիքաւորի կեանքի Ընտանեկան կեանք ստեղծելով կամայ-ակամայ ստիպւում է խօս տալ մանկավարժական ասպարէզից և որոնել նիւթականի կողմից աւելի շահաւէտ և արդիւնաւոր մի ուրիշ զբաղմունք։

Վաղուց հետէ արդէն խօսւում է, թէ հասարակութեան և թէ լրագրութեան մէջ, դիւզական ուսուցիչների ռոճիկն աւելացնելու մասին։ Միջնակարգ գործադրութիւնների ուսուցիչների այդ խնդիրն ինչպէս յայտնի է, քննութեան առարկայ դառաւ նոյնիսկ կառավարչական շրջաններում։ Պարզ բան է, որ այդ հարցը բաւականաչափ հասունացել է և դիւզական ուսուցիչների ստացած ռոճիկի անբաւարարութիւնն ընդունում է որպէս զուտ իրողութիւն, որի շուտափոյթ վերացումը ոչ միայն օգտակար է ուսուցիչների համար, այլ է գիւղի, հասարակութեան և պետութեան շահերի անբավարարութիւն նա խիստ կարեոր ու

անկետաձգելի է։ Նա ունի երկու կողմեր, որոնք հարցի լուծման դէպքում միատեսակ արժանի են լուրջ ուշաղութեան։

Մի կողմից պէտք է մտնել ուսուցչի դրութեան մէջ, անհրաժեշտ է նայել նրա վրայ ոչ միայն որպէս պետական բարդ կազմուածքի մի մասնիկի, այլև որպէս մի կենդանի արարածի, մի մարդու վրայ, որը իւր օրինական պահանջներն ունի և այդ պահանջներին բաւարարութիւն տալուցն է կախւած նրա հոգեկան հաւասարակշուութեան յայտնի աստիճանը և որոնք աղբում են որոշ չափով նրա անհատական ծառայութեան և գործադրութեան վրայ։

Մենք չենք կամենում զբաղեցնել ընթերցողին այդ գաղափարի մանրամասն վերլուծութեամբ։ առանց այն էլ մեր խօսքը երկարեց։ մեր նպատակն էր ծեակերպել այն միայն ինչ որ յայտնի է ամենքին իրենց անձնական փորձից և հետազոտութիւնից,

Եթէ մի բոպէ համեմատելու լինիք մեր գիւղական ուսուցչի ռոճիկը արտասահմանեան ժողովրդական ուսուցիչների ստացածի հետ՝ կրտեսնէք որ մինչեռ մեր գիւղը ուսուցչի ռոճիկը 450 բուրլուց դէնը չի զնում (ես վերցնում եմ մեր ժողով ուսամենաբարձր ռոճիկը), ֆրանսիական ժողովը ուսուցչի ռոճիկն հասնում է մինչեւ 2500 ֆրանկի, նվազականը՝ 2500 կրօնի—մօտ 1300 բուրլ։ («ՀՅԵՍՏԻԱ Առաջականություն» 1904 թվականի գր 26)։

Արտասահմանում աշխատավայր անդամականացնելու 7/31 1922



են, որ լիշեալ պետւթիւնների մէջ լնդունւած զըրաբների միութիւններն համարեա համարժէք են մեր բուբուն և որ, ուրիշ խօսքով, «շատ-շատ կենսական անհրաժեշտ պիտոյքներ, որոնց համար մեզանում հարկ կըլինի վճարել, օրինակ, մի բուբի՛ ֆրանսիայում կարելի է զնել մի ֆրանկով, շվեդիայում մի կրօնով, գերմանիայում՝ մի մարկով։ Բանից դուրս է գալիս (մօաւաւորապէտ անշուշտ), որ ֆրանս. գիւղական ուսուցիչն իւր ծառայութեան ընթացքում ստանում է մօտ 2500 բուբի՛, շվեդականը՝ նշյնպէս 2500, իսկ գերմանականը՝ 2588-ից մինչեւ 6000 ր.։

Բերւած տեղեկութիւններից հետեւում է, որ արասասահմանում զիւղական ուսուցիչը լիովին հնարաւորութիւն ունի ազատ մնալու մասնաւոր դասերից և այլ կողմանի զբաղմունքներից ու իրա ամբողջ եռանդը, ամբողջ ընդունակութիւնները կենդրուացնելու դպրոցական դասերի վրայ և... իւր երեխանների դաստիարակման շուրջը, որ նշյնպէս կարեոր նշանակութիւն ունի։

Ինքնըստինքեան հասկանալի է որ, նա բացի այդ՝ բարեբաստիկ միջոցներ և հնարաւորութիւն ունի ստանալու գրքեր էլ, հանդէսներ էլ և այն ոչ միայն մանկավարժական, այլ և ուրիշ նիւղերի վերաբերեալ մատակարարելու իրեն և ընտանիքին հոգեկան հանոյքներ, ուշի ուշով պատրաստելու իրա դասերին և վերջապէս գժբաղդ անակնկալների (օրինակ հիւանդութեան) ժամանակ, առանց վաշխառուների նան-

կըն ընկնելու, եօլա գնալ, մի բան որ հաղւաղէպէ է մեր զիւղ. ուսուցչի կեանքում։

Արասասահմանի ժող. ուսուցիչը դպրոցում գործերը վարում է խաղաղ, անվրդով, առանց զրգուելու, առանց զպայնութեան, տանն էլ նա լիովին բաւարարութիւն է տալիս իւր էական պահանջներին՝ և առողջութիւնը պահպանելով, և՝ հոգու հաւասարակշռութիւնը, որը անհրաժեշտ է ինչպէս իրա և և իւր ընտանիքի, այդպէս և այն գործի համար, որին նա ծառայում է։

Պարոններ, զրանք այնպիսի բաներ են, որոնց նախանձում է մեր զիւղական ուսուցիչը, որի կեանքը ներկայացնում է մեզանում, ընդհակառակը, հոգեկան մի անվերջ ողբերգութիւն։

Մեր ինտելլիգենտները, դժբաղդաբար, անցնում են նրա կողքից հանգիստ և անտարբեր՝ նեղութիւն չըշահելով մի բապէ մատանքու այդ ողբերգութեան մասին։

Ասէնք, տեղիք էլ չունին նրանք այդ առթիւ անհանդիսա լինելու։ Նրանք, մեր այդ ապահովւած ինտելլիգենտները, ապրում են միայն իրանց համար, ինչպէս որ զիւղական ուսուցիչներն էլ՝ իրանց համար։ Եւ կեանքի մէջ ոչ ոք ուրիշի մասին չի մտածում։ Նրանք երբեմն են միայն բարեհանում հարեւանցի մի ակնարկ դյել իրենց մերձաւ որների տանջանքներով լի կեանքին վրայ, — մերձաւորների, որոնք ո՛չ մեծ ոռնիկ են ստանում, ո՛չ աստիճաններ (չիներ), և ո՛չ

Էլ պաշտօնական որևէ արտօնութիւն են վայելում...

Ուսուցիչը դպրոցի հոգին է. երբ հոգին հիւանդէ, դպրոցն էլ է հիւանդանում և կարիք զգում անմիջական բժշկութեան ու ոչ թէ պէտք է մանրաբեռնել նրան աւելորդ հոգսերով:

Ի հարկէ, շատ հեշտ բան է նստել տաքուկ առանձնասենեակում և զանազան օրինադժեր յօրինել ժողովրդական ուսուցչի առանց այն էլ ծանր աշխատանքը աւելացնելու համար:

Վաղուց ամենքը խոստովանում են, որ ժողուսաւորութեան զործում արևմտեան Եւրոպան մեղանից շատ առաջ է զնացէլ և մենք բոլորս էլ զիտենք, որ կրթութեան զործը այնուեղ անհամեմատ աւելի լաչող է զնում քան մեզանում:

Այս երկու դրութիւնների ուղղակի հետևանքը այն է, որ մեր յետամնացութիւնը, որքան էլ և մեջ լինի նա այժմ, տարուց տարի էլ աւելի կրծեծանայ: Սա շատ նման է այն դպրոցական խյանի թւաբանական խնդրին, որտեղ երկու նեպրնթաց կառքեր վազում են միմեանց յետելից, սակայն առաջինը յետից աւելի արագ է ընթանում... Եթէ այդպիսով մաքսային կամ առհասարակ կուլտուրական պայքարը եւրոպայի հետ այսօր իսկ ժանր է մեղ համար, ապա յետազայ տարիներում նա կրկառնայ աւելի ևս ծանր և այդպէս շարունակ, մինչև որ իվերչոյ մենք տնտեսականապէս և կուլտուրապէս կախումն կունենաք Արևմտաքից:

Իսկ եթէ մենք, այսպէս թէ այնպէս, կարողանանք մեր ժողովրդական կրթութեան զործը դասաւորել այնպէս, ինչպէս մեր դրացիներինն է՝ այն ժամանակ երկու նեպրնթաց կառքերը կըզնան միատեսակ արագութեամբ և նրանք շարունակ միւնցն հեռաւորութեան վրայ կըմնան մէկը միւսից. այսինքն մենք շարունակ այնքան յետ մնացած կըլինինք Արևմտեան Եւրոպայից, որքան ներկայումս ենք յետ մնացած:

Ներկայումս անտեսական և կուլտուրական ալյօքարը խիստ ժանր է մեղ համար, այդպէս էլ կըմնայ նա, եթէ շարունակւի այսօրւայ դրութիւնը:

Ճեպրնթաց կառքերի այդ օրինակից երևում է, որ երկու կառքերի միջև գտնուող աարածութիւնը կըպակասի այն ժամանակ միայն, երբ յետելից զնացող կառքը առաջնից աւելի արագ ընթանայ: Իսկ այդ նշանակում է, որ դրացիների հետ կափւը թեթևացնելու համար մենք պարտաւոր ենք աւելի լաւ տանել ժող. լուսաւորութեան զործը, քան Արևմտեան Եւրոպան:

Տապ տարի որանից առաջ էս ծանօթացայ ժող. լուս. զործին նւիրւած այն ժամանակ հրատարակող, վիճակաղբական աեղեկութիւնների հետ: Այն միջոցին Գերմանիայի 50,000,000 ազգաբնակութեան ժող. լուս. զործի վրայ ծախսում էր 110,000,000 ըուբլի. նրանք ունեին աւելի քան 55,000 դպրոց, որոնցից իւրաքանչիւրի վրայ ծախս

Էր գովիս միջին թւով 2,000 ըուբլի: Ռուսաստանում աղջաբնակութիւնը 130,000,000-ից էլ առելէ, ուստի և մեր հարեանին հաւասարւելու համար մենք պէտք է մեր ժող. լուս. գործին յատկացրած լինէինք աւելի քան 250,000,000 ըուբլի:

Այժմ մի ըուպէ փորձենք կրնատել, սղումներ անել ի նպաստ մեզ: Ենթադրենք որ առայժմ մեր դպրոցներին կարօտ չեն բուխարացիները, թուրքմէնները, Մարտակէրները, Եակուտները և այլն, և որ ներկայումս դպրոցներ են հարկաւոր միայն 120,000,000 աղջաբնակութեան համար. Ենթադրենք նշնիսկ, որ իւրաքանչիւր դպրոցի միջին ծախսը 2,000 ըուբլի խիստ շատ է և բաւականահանք 1500 ըուբլով, հետեաբար և 150,000,000 ըուբլով մէնք կունենանք 100,000 դպրոց: Ենթադրենք դարձեալ, որ ուսուցիչների կարեւոր թիւը (իւրաքանչիւր դպրոցի 2—3 ուսուցիչ, ինչպէս Գերմանիայումն է) 250,000 հոդի կայ մեզանում և նրանք կարող են տանել գործը, ոչ վատ գերմանականից:

Այդ բոլոր ենթադրութիւններից յետոյ 150,000,000 յատկացնելով մեր ժող. լուս. գործին՝ կրկարողանանք հասնել խնդրի այն ձեխն, երբ կառքերը զնում են միւնցին արագութեամբ, բայց առաջից զնացողը (Գերմանիա) շատ վաղ դուրս եկած լինելով՝ կարողացել է բաւականաչափ հեռանալ յետինից (Ռուսաստան):

Այդպիսով, ամեն տեսակ սղումներ անելուց յե-

այ 150 միլիոն ըուբլի ժող. լուս. գործին յատկացնելով է, որ հնարաւորութիւն կունենանք միայն stetus quo պահպանելու, այսինքն մնալու այն յետամացութեան կէտին, գերմանիայի վերաբերմածք, ինչ որ այժմ է:

Հետեաբար կուլտուրական պայքարն էլ կրմնար մեզ համար նոյնքան ծանր, որքան է ներկայումս:

Ժողովրդական լուսաւորութեան գործում մեր մրցակցին մի փոքր մօտենալու համար 150,000,000 շատ քիչ է: Նատ լաւ լիշում եմ, որ սրանից տասը տարի առաջ, տեղական լրադրներից մինում արտապատճ էր գերմանական մի հանդէսի խօսքերը, որտեղ գերմանական գիտնականներից մին, ի պատասխան մեր մայրաքաղաքի լրադրների, մատեմատիկական հաշւով ցցյց էր տալիս, որ ուսասատանի, ժող. լուս. գործը երբէք չէ կարող հասնել գերմանականին որովհետև գերմանիային հաւասարւելու համար Ռուսաստանու պէտք է ժող. լուս. գործի վրայ ծախսում է գերմանիան:

Գերմանացի գիտնականի այդ խօսքերը կսափակէն մեզ կրկնապատճել մեր եռանդը և ոչինչ չխնայել ժողովրդի կրթութեան համար:

Մենք ոչ մի հիմք չունինք զանգատւելու միջոցների սղութիւնից:

Եթէ երկաթուղիները շինւում են, ապա պէտք է շինւի և լուսաւորութեան գործը: Եթէ հանա-

սպարհները եկամուռա են բերում, նրանցից պակաս չէ և լուսաւորութեան արդիւնքը: Եթէ ճանապարհների և մէկումէս միլիոնանոց զօրքի համար հարիւրաւոր ու հաղարաւոր միլիոններ կարելի է գտնել, ապա պէտք է ճարել և ժող. լուս, համար, իսկ առանց լուսաւորութեան ամեն մի մաքսային և կուլտուրական կոիւ շատ թանգ կրնատի մեզ վրայ:

Ամերիկայի ժող. լուս. գործի հետ համեմատած մենք դանւում ենք աւելի վասթար վիճակում, և նրան հաւասարւելու համար մեզ հարկ կրինի, ըստ պ. Մօրօպովի, «Միայն նախնական կրթութեան վրայ ժախսել մօտ 650,000,000 բուբլի տարէնք և արդարական ուսումնարաններում սովորողների թիւը պէտք է լինի 30,000,000 աշակերտ: Ամերիկայի տարրական դպրոցներում միայն ուսուցիչները 400,000-ից էլ աւելի են, որոնցից իւրաքանչիւրն ստանում է 2—6,000 բուբլի ոռոճիկ, այնինչ մեզանում ընդամենը 70,000 հոգի են և ստանում են (ամօթ է ասելն անգամ) 100—450 բուբլի միայն...»

«Մինչդեռ Ամերիկայում, ասում է նոյն Մօրօպովը, մի քանի տարի առաջ այդ վիթխարի պէտութեան համար պահում էին լնդամենը 25,000 դինոր, մեզանում պահում ենք 1,500,000 դինոր:

Բանից դուքս է գալիս, որ Ամերիկացիք պահում են ուսուցիչների մի մեծ քանակ և զօրքի մի մի փոքրիկ քանակ: Իսկ մենք լնդհակառակը:

Ժող. լուս. համար մարդագլուխ ծախսում է

Շվեյցիայում 2 ր. 30 կ., Պրուսիայում՝ 4 ր. 30 կ., Ամերիկայում՝ 5 ր. 45 կ. և նոյն իսկ 10 րուբլի, — Ուսումնականում միայն 20 կրոպէկ է ծախսում մարդագլուխ:

Տարօրինակ բան է, Աստուած վկայ:

Հէնց որ մեր որեւէ թերութիւնը արդարացնելու կարիք է լինում, իսկոյն Եւրոպացիք են մտներս դայլիս և նրանց օրինակն ենք լիշում: Բայց երբ ասում էր, թէ Եւրոպացիների գալրոցները դանւում են բարեկարգ վիճակի մէջ, որ նրանք ապրում են մեղանից անհամեմատ աւելի լաւ և օրինակելի և որ արժէ իւրացնել նրանց այս կամ այն կարգերը, — մենք իսկոյն սկսում ենք պատէպատ ընկնել, հաւատացնել մարդկանց, թէ մեր ուժից վեր է Եւրոպայի հետ չափւելը և այլն և այլն:

Եթէ մենք անկարող ենք և չենք լնդօրինակում նրանց գրական կողմերը, ապա էլ ինչո՞ւ էր լնդօրինակում նրանց բացասական կողմերը: Եթէ մենք թոյլ ենք տալիս մեզ սովորական կամ չնչին դէպքերում նմանւել Եւրոպացիներին, եթէ մենք սիրում ենք նրանց նման հաղնւել և նաշել, ճանապարհորդում ենք երկաթուղով, խնճոյըների մէջ պարում ենք, ներկայացումների գնում, երաժշտութիւն լսում, ձիարշաւներ կազմակերպում, կուռում սիրաբանում ու չարախօսում... ապա հարց է, թէ ինչո՞ւ այդքան նորութիւններ լնդունողներս յամառ կերպավ հրաժարւում ենք նրանց իսկապէս օրինակելի կողմերը

Եւրացնելուց, ոչ այնքան արտասովոր և գժւարին, որքան հեռագիրը և դաշնամուրին նւազը։ Ասացէք, սիրելի ընթերցող, ինչո՞վ բացատրել այդ երեսյթը, եթէ ոչ Սպէնսէրի այն նկատողութեամբ, թէ վայրենիները ամենից առաջ լնդօրինակուծ են շքեղ, փայլուն առարկաները, զարդերը և ապա օդտակարու անհրաժեշտ բաները։

Եւ ո՞ր երկրում, եթէ ոչ մեղանում, ներկայումն կարող են տեղի ունենալ այնպիսի ախուր փաստեր, որպիսիքն են հետեւալները։

Ա. — «Կինդիցիոյէ զիւղի դպրոցի ուսուցիչը մօտ է խելագարութեան։ Սա առաջին դէպքը չէ այդ համայնքում, որի Տամիշկը զիւղի նախարարական ուսուցիչն ու նրա աղջիկը խելագարւել են։ Վերջինս տանից փախառ անտառ և օրերով մնաց այնտեղ։ Ինչո՞վ բացատրել այդպիսի ախուր երեսյթները և ինչպիսի կացութեան մէջ է դանւում զիւղական ուսուցիչը, որ կարող է այդ զրութեան համար։ Արտեղ է չարիքի արձարար...» (անս. «Черноморскій Вѣстникъ», 1903 թ. Յունվար 14, № 10):

Բ. — Ահա և մի ուրիշ փաստ, որ առաջնից ոչ պակաս գյոներով նկարում է մեր առաջ զիւղ. ուսուցիչ ողբայի վիճակը։

«Սուխումի շրջանի մի զիւղում ուսուցիչը խելագարւեց, ինչպէս յեաց պորզւեց՝ ժող. մանկավարժի խելագարւելու. շարժառիթը այն սարսափելի վիճակն է եղել, որի մէջ գործում էր խեղնը։

«—Մինչև այսօր փող չէին տալիս ինձ, գոչում էր խելագար ուսուցիչը։—այժմ ի՞նչ կանեմ փողը։ Նրանք այլևս պէտք չեն ինձ, ես այժմ առանց փող էլ կարող եմ ապրել... Յիմար էի ես, որ զիւղացիներից փայտ էի խնդրում, այժմ ես չեմ մրսիլ երբէք, այլևս փայտն ինչի՞ս է պէտք...»

«Դա՛ռնէ զիւղ. ուս. կեանքը» աւելացնում է լրագրի թղթակիցը։ (Նոյն 1903 թ. Ապրիլ 2. № 75):

Գ. — Ահա ձեզ և երրորդը, որ նոյնպէս նշղրտիւ պատկերացնում է կրթական գործի այդբազմաչարչար Յողի ողբերդական զրութիւնը։

«Խ. ուսուցչուհին, իւր ոռնիկը ժամանակին չառանալուն համար մի անգամ յուսահատութեան դուռն հասած՝ գալիս է քաղաք և արտասւակալած աչքերով զիմում գաւապաետին հետեւալ խօսքերով։

«—Պարոններ Ե՞րբ կստանամ ոռնիկս։ Ուսելու ոչինչ չունիմ... Զմերային ամբողջ զիշերներ անց եմ կացնում միմութեան մէջ, որովհետեւ փող չունիմ։ Թէկուղ երեք կոպէկանոց ճարպի մի մոմ գնելու... Վերջերս իմ կերածն է ու հայ և չուր... Ե՞րբ կստանամ ոռնիկս...»

Իշխանաւորները նայում էին միմեանց, նրանց գէմքերն արասայալում էին կստարեալ յաղթութիւն։ Գաւառական կոպիս կամայականութեան այդ ննշող ըսպէին զրագիրը (պիտար) գտրծաւ թշւառ ուսուցչուն և ասաց։

— Խոճիկդ կատանաս, պայմանաւ սակայն, որ
մի փոքր պարես:

Սոսկալի կարիքն ու անել զրութիւնն ստիպե-
ցին ուսուցչուհուն ընդունել այդ ցինիկ պայմանը,
որից լետոյ նա ստացաւ իւր ռոճիկը ու զրօշներով...
(նոյն, 1903 թ. փետր. 10, № 32):

Բացարութիւններն աւելորդ են: Բայց գուցէ
ընթերցողը կասկածի, թէ ինչո՞ւ երէք փաստերն էլ
Քութայիսի նահանգիցն եմ բերում և արտազրում եմ
մինցն լրագրից, ուստի և տուաշ կրբերեմ մի այն-
պիսի լուրջ ձանկավարժական հանդէս, որպիսին է,
օրինակ «Русская Школа»-ն, որի 1898 թ. IV
դրում ահա թէ ինչպիսինկարագրութեան ենք հան-
դիպում մեր ժող. ուսուցչի արտասւելի նիւթական
վիճակի մասին:

Մոսկվայի «զրադիտութիւն տարածող կօմիտե-
տի» ուսուցիչների զրութեան վերաբերեալ հարցին
եարօսլավի նահանգից ստացել են 75 պատասխան-
ներ, բոլորն էլ բացառական իմաստով (աննախանձելի
վատթար, ժանր, և այլն և այլն):

Ահա այդ պատասխաններից մի քանիար.—

«Ուսուցչի նիւթական վիճակը—զրում է մէկը,
—ոչնչով չիղանաղանում դիւզական կատարեալ ար-
նանից, որին սպառնում է դառն, անապատամ
ձերութիւնը»:

«Դպրոցի խեղնութիւնը և ուսուցչի անապա-
հով կացութիւնը,—զրում է երկրորդը,—սասակայ-

նում է դպրոցական զբաղմանքի ծանրութիւնը և
մեռցնում եռանդը»:

Երրորդը զրում է «Հոգեկան անբարեխաչող պայ-
մաններում ուսուցիչն երբեմն առանց զգալու են-
թարկում է կոպիս միջավայրերի աղդեցութեանը
թուլանում է նրա եռանդը, թուլանում է և զոր-
ծունելութիւնը, բայցի այդ, նիւթական հոգսերը խան-
գարում են նրա ըստ արժանույն կենդրոնանալուն
իւր մէջ... իսկ քննիչների յանախ միակողմանի պա-
հանները նոյնպէս թողնում են իրենց աղդեցութիւ-
նը...» և այլն և այլն:

Բոլորը, բոլորը զրւած են մարդու չղերը քայ-
քայող հոգւովի:

Իւրաքանչիւր մարդու աշխատելու ընդունակու-
թիւնը, ասում են, ուղղակի կախումն ունի նրա
զործածած մսի կամ այլ մննդի քանակութիւնից: Ու-
րիշ խօսքով, լաւ աշխատելու համար պէտք է լաւ
սնունդ ստանալ: Դժբաղդաբար, մեր զիւղական ու-
սուցիչներն, հակառակ իրենց բուռն ցանկութեան,
չեն կարող այդ ամենահասարակ պայմանն անդամ ի
կատար ածել՝ թէ նիւթական միջոցների չափաղանց
սղութեան, թէ իրա ժամանակին ոռնիկ չստանա-
լու և թէ այդ ոռնիկի ողորմելիութեան պատճառով:

Ասացէք խնդրեմ, ի՞նչ յաջողութիւն, ինչպիսի
յառաջադիմութիւն կարելի է սպասել նոյն իսկ այն
ուսուցիչներից, որոնք սիրում են իրենց զործը, նը-
ւիրւած են այդ զործին իրենց ամբողջ էռութեամբ

— Երբ նրանց հողին՝ հակառակ իրենց ցանկութեան, թէ տանը, թէ դպրոցում դասի ժամանակ՝ զբաղւած է այն հարցով, թէ ինչպէս պէտք է կերակրւի, հաղնվի... մի խօսքով թէ այդ ողորմելի ռոճիկով ինչպէս դշութիւն պահպանել ու դեռ այդ ռոճիկն ստանալու համար էլ պէտք է հաղար ու մի տեսակ հնարներ մտածել: Ասացէք, ինչպէս կարող է խեղն ուսուցիչը հանդիսաւ և բոլորանւէր զբաղւել իւր գործով, երբ նրան ննջում, հաղածում է մի պատառ հացի հողսը:

Այդ անիմած փորի հարցը չէ կարող չպատեցնել ուսուցչին իրերի ներկայ դրութեան մէջ:

Ասում էն կեանքը առնել-տալու, ծշական փոխանակութեան մէջ է: Թէ բնութեան և թէ մարդկութեան մէջ տիրում է այդ փոխանակութիւնը: Մենք կարօտ ենք այլոց աշխատութեան պատողին, բայց դրան ձեռք բերելու համար մենք կրտանք մեր աշխատութիւնն ու նրա պատուզը: Դրան են ձգտում, բնականարար, ամենքը: Բայց այդտեղ ահազին դեր են խաղում: հաւասարակշռութեան և դդացմունքի նժարները: Ումանք վերցնում են առելի, քան տալիս են, ուստի և մնում են շատ այնպիսիներն էլ, ուրոնք տալիս են առելի, քան սատանում են:

Ահա այս վերջինների թւին են պատկանում և մեր զիւղական ուսուցիչները: Հնաւանդ մի կանոն կայ, թէ մարդուն գնահատողը իւր արտադրածը, իւր աշխատանքը պէտք է լինի: Այդ կանոնը մոռա-

ցութեան է արւում ուսուցիչների վերաբերութեամբ: Երբ մարդ կեանքից ստանում է աւելի պակաս, քան հարկաւոր է, այսինքն երբ նա՛ փոքր ի շատէ մարդավարի ասլրուստի համար պահանջւող նւազական չսփով անդամ չօդտուում, այդտեղ կեանքը կորցնում է իւր արժեքը: Այդտեղ մարդու զրական մեծութիւնն իշնում է բացասականի, այսինքն ոչինչ չտալով հասարակութեան՝ նա ինքնակամ վերցնում է նրանից իրա չունեցածը, ընկնում է յանցագործութեանց մէջ և այն ժամանակ մարդիկ աշխատում են հեռացնել նրան, իսկ եթէ խիստ փանգաւոր հանգիսանայ, — բոլորովին վերացնել մշտեղից, որպէս անպէտք և վնասակար առարկայ: Բանն այնտեղ է հասնում, որ ծանը յանցաւորներին որոնելիս նրանց գլուխը գնահատում են մի որոշ գումարով, նայած թէ որքան կարևոր է նրանից աղատուելը:

Օրապահիկով ապրող թշւառները, բնականարար, ամենափառը գաղափար անդամ չունին անակեսութեան ու հաշիւների մասին: Առանց մտածելու վաղւան «սև» օրւան մասին, նրանք անհաշիւ: Ճախսում են այն, ինչ որ յաջողւում է նրանց ձեռք բերել՝ վաստակել կամ փոխանական անել այսօր... Իպահանջել հարկին նրանք ծախում են իրենց հաղուստը, իրենց ձեռքի գործիքը, առանց որի վաղը աշխատել կամ մի կտոր հաց ձեռք բերել չել լինի արդէն: Այդտեղ այլիս կարելի՞ է միթէ ծմբան պաշար ձեռք բերելու կամ ծախսելը կրնաւելու և այլնի ծասին մտածել կամ

հողալ: Հոգութով ու մտածմունքներով ժամրաբեռն-
ւած ուղեղը կարո՞ղ է միթէ այդպիսի հաշիւներ ու-
նենալ ի նկատի: Ահա թէ ինչու քաղաքատնաւեները
փաղուց արդէն մտածում էն այնպիսի օրէնքներ
ստեղծել, որ խնայել, տնտեսել, իրենց կեանքն հաշ-
ով դասաւորել կարող լինին միայն հարուստները և
«ըսպէի կարիքի» դէմ ապահովագրւածները... Բա-
ւասկան չէ, որ այժմ մեր ժողովրդական ուսուցիչն
ստանում է խիստ ողորմելի, նոյնիսկ իրա կենսական
ամենաանհրաժեշտ կարիքներին բաւարարութիւն
չուող ոռնիկ, դեռ այդ էլ իրա ժամանակին չեն վր-
ճարում: Ուսուցիչներից շատերը յանախ մի տարուց
կամ կէս տարուց յետոյ էն ստանում իրենց խղճակի
ոռնիկը և այն էլ երկարբարակ զիմումների ու ա-
ղաջանքների շնորհիւ յանդէալ զիւղապետի, նրա զր-
բարի, շրջանային պրիստաւի, գաւառապետի, հաշ-
տարար միջնորդի և այլոց:

Դուք մի բոպէ առանց տաքանալու ստունա-
սրբութեամբ երեակայեցէք, օրինակ, որ դուք պաշ-
տօնեայ էք կամ գտնուում էք մասնաւոր ծառայու-
թեան մէջ ու ձեր ոռնիկն ստանում էք մի ամսից
յետոյ: Ինչպիսի զալմաղալ էք բարձրացնում դուք,
ձեր մատակարարները, տանտերը, մասավաճառը, նր-
պարախաճառը, ձեր ծառան, դերձակը և այլն: Ձեր
երեխաները, վերջապէս, որտեղից փող կստանան դա-
սական առարկաների և նախանաշիկի համար: Տէնց
այդ միջոցին Արտաշէսի կօշիկն է պատուում, իսկ

Աշխէնիկինները բոլորովին ձեռքից գնում են: Ձեր ոռ-
նիկն հաղիւ բաւականացնի մի ամաւայ այդ կարգի
ծախսերը և յանկարծ—կաց: Կօշիկները կարկատան
են ուղու մ, երեխանները լալիս են, պարտատէրերը
դուռն են թակում, գուք ինքներից պարտքերով ծան-
րարեռնաւած,—տխուր և մռայլ նայում էք ձեր կան-
ցելեարիխյի պատուհանից:

Պետական ծառայութեան մէջ, ասենք, այդպէս
բան չի պատահում, բայց խօ մասնաւոր ծառայու-
թիւնների մէջ կարող է պատահել և սակայն ինչպէս
են բողոքում, այդ ժամանակ, ծառայողները, ինչպի-
սի հարայ-հրաց է լնկնում, ինչպէս վաս է ազգում
այդ գործի վրայ:

Փողը, անիմւած փողը արեան դեր է խաղում
ժամանակակից կազմակերպութեան մէջ: Տէնց որ
սպառուում է փողի պաշարը, խկցյն կեանքը քարա-
նում, կանդ է առնում: Մարդը, որպէս հաստրակու-
թեան մի անդամը, սկսում է հիւանդանալ: Պարա-
գիանները բայց են զնում այնաեղ, ուր զրանից քիչ
առաջ աեղի էք ունենում զրամի կենդանի շրջանա-
ռութիւնը: Առանց պարտքի ապրելը դառնում է
անհնար, Բնական և հասկանալի պարտքերլինում են,
բայց կան և չարաշուր պարտքեր, որոնք յայտնուում
են որպէս ախտանիշ (СИМПТОМЪ) դրամական սակա-
ւարիւնութեան և որքան անկուսալի լինի այդ սա-
կաւարիւնութիւնը, այնքան էլ վտանգառ է լինում
պարտքից առաջացած քայլայումը կազմւածքի մէջ:

Տոկոսներն հասնում են հրեշտային չափերի, որովհետեւ
հիւանդութիւնը,—Եթէ նա յետոյ մի առժամանակ
բժշկուի էլ, այնուամենայնիւ արձատական չի լինիլ
այդ բժշկութիւնը,—Նրա սազմերը կրթափանցեն
կազմաքանակի խորերը: Դժւար կացութիւն է, անտանե-
լի կեանք:

Ի՞նչ ռոճիկ են ստանում մեր ժող ուսուցիչները
—200—423 բուրլի և պակաս: Դա մի չնչին դու-
մար է, որ մեր թանգութեան օրերում շատ աւելի
չնչին է դառնում, ծանաւանդ երբ սկսում է ան-
շարժութեան շրջանը (ժմեռ.), երբ ամեն տեղից
յոյսէ կտրւում է: Դժբաղդ ուսուցչին, յանկարծ ծր-
մեռ ժամանակ վրայ է հասնում սարսափելի կարիքը,
եւր հետ բերելով մանր-մանը նեղութիւնների մի ամ-
բողջ շարան, որոնք անխուսափելի են դրամի պակա-
սութեան ժամանակ:

...Տալիս են, բայց ոչ թէ խնդիրքիդ դիշելով,
այլ իւրաքանչիւր ֆունտի վրայ 1, 2, 3... կոպէկ
վրայ դնելով: Անցնում է մի ամիս, երկրորդը, երրոր-
դը, չորրորդը...

— Ի՞նչի չեք վճարում, ախար, պարոն ուսու-
ցի՛չ, մեր պարաքը այսքան ժամանակից իվեր:

— Դեռ դանձարանից փող չէ ստացւել, երեք
դիշական հասարակութիւնն էլ դժւարանում է հար-
կերը տալ...

— Ուրեմն այսուհետեւ ոչինչ չենք կարող տալ
ձեզ, մեղ մօտ էլ ոչինչ չէ մնացել:

Դրութիւնն աւելի ևս վասանում է: Ներքելոց
պարտքով (նիսիս) ոչինչ չեն տալիս, իսկ վերեկց չի
ստացուում դեռ ևս: Կեանքի պայմաններն հետզհետէ
դառնում են անտանելի: Ուսուցիչը ողորմութիւն
խնդրել չէ կարող, այն էլ բաւական է, որքան գլուխ
է ձռել նա, աղաչել պաղասել պարտքի համար: Մի՛
մուռանաք և այն, որ պարտասէրերն յանախ կաս-
կածում են, թէ մի գուցէ ուսուցիչն երբէք չստանայ
իւր ռոճիկը: Իհարկէ, նա կստանայ մի օր, գուցէ
ոչ լիովին, բայց այդ սպասողական դրութեան մէջ
ամեն մի ժամը օր է թւում, օրը՝ տարի: Դեռ լաւ,
Եթէ ուսուցիչը քիչ ու միշ իրեղէններ ունի, վաղօ-
րօք ձեռք բերած, կամ ծնողներից ժառանգութիւն
ստացած, —նա կարող է զրաւ գնել այդ իրեղէնները,
թէև կրկին ահապին առկոսներ տալով: Շնորհիւ այդ
հանգամանքի նրա ստացած ռոճիկի, վստահ կարելի է
ասել, ^{1/3} չըանում է: յապազման պատճառով նա
ստիպւած է այդ ռոճիկի մի մասը վճարել կողմանիկ
մարդկանց... և որովհետեւ այդ միւնցն բանը կրկն-
ուում է ամեն տարի, հետևաբար տարւէ տարի այդ
կարիքն էլ կրգառնայ աւելի շեշտավիք, քանի որ փո-
քըն էլ տարւէ տարի կախի պակասիլ...

Վիճակադրական տեղեկութիւններից պարզ ե-
րեւում է, որ բժիշկների և ծանկափարմների մահա-
ցութիւնն հասնում է անհաւասարի թւերի:

Կասպերն հաշւել է, որ կրթական հաստատու-

թեանց մէջ ժառայրզներից հաղիւ 27⁰/0 ապրում էն մինչև 70 տարեկան հասակը:

Մեր այժմեան դպրոցները նձան են մի բարդ մեքենայի, որը մի անգամ շարժողութեան մէջ զըրւելուց յետոյ այլպէս էլ շարժուում է սահմանւած կարգով: Եւ այդ շարժողութեանը ոչինչ չի խանգարում, — ոչ չի անիւր չեն կարող կանգնեցնել նրան, — նա շարունակ շարժողութեան մէջ է: Բայց թէ այդ շարժողութիւնն օգնում է գործի յառաջխաղացութեան, այդ մասին ոչ ոք չի մասածում, բաւական է, որ նա կանգ չառնի:

Անհամանձելի է և ուսուցչի զրութիւնը: Նա մինչև այսօր եղել է մի պարզ մեքենավար, որ պարտաւոր է ժամի 8-ից մինչև 3—4 հակել իւր մեքենայի փրայ: Բայց թէ խցանն է փշանում, կամ մի այլ բան խանգարում, ոչ ոք չի հարցնիլ անդում այդ: Ոչ ոքի հոգը չէ, թէ ինչպէս նորոգել խցանը կամ կարկառել, կարգի զցել մեքենայի փշացած մասերը: Ոչ ոք հարց չէ տալիս նրան, թէ ինչից առաջացան այդ խանգարումները և թէ ինչպէս անել, որպէսզի մեքենան առելի լուր գործի կամ առելիքից վնասներ առաջանան:

«Չեր պարաքն է դործաղրել և ոչ թէ քննադատել»:

Այդ էր մեր դպրոցը, նշանաբանը, սիստեմը,

յորում դաստիարակուում էին «Հքննադատող» դործաղիրների սերունդները:

Սարկացած, ենթարկւող, շարժուն խրաւիլակների հրամանները մեքենայաբար կատարող արարածներ սաեղծել կարողանալը, երկար տարիներից իւվեր, համարւում էր այս կամ այն վարչական անձի անպայման արնդունակութիւններովն օժաւած լինելու ապացոյց:

Դարունակ խեղգւում էր մարդու միաքը, խիղնը ամեն մի անհաստականութեան ազատ արտայայտութիւն, մարդկային տարբական իրաւունքները պաշտպանելու սմէն մի փորձ: Այն «այծերը», որոնք յանդգնում էին յայտարարել, թէ ծառայողը ամենից առաջ մարդ է, և որպէս այգափիսին, պէտք է պարտականութիւնների հետ ունենայ և իրաւունքներ, որոնք պաշտպանէին նրան՝ իշխանաւորների կամպականութեանց գէմ, — այլպիսիները սասակի հաղածւում էին:

Իուկու ընդունակութիւնը, անձառութիւնը և կամքից գուրկի լինելը, — ահա զրանք էին համարւում ուսուցիչների ամենաբարձր առաքինութիւնները: Եւ այդ բորոն հաշւում էին «իրերի բնական կարգեր», որովհեաւ պետութեան ոսակիանական վարչական կազմը այլ կերպ չէր կարող իւր գոյութիւնը պահպանել այլպէս հաստատ ու յարառե, առանց «փրկարար սարսափի»:

Եսաս պարզ է ամենքի համար, զեռ դպրոցա-

կան նստարանից, որ ֆիզիքապէս կաշկանդւած մարդուն անընդունակ է որևէ ազատական շուրջման: Այդպահի անտղաս մարդկանց մղել գէպի մկանային աշխատանք, թէ անդժութիւն կը լինէր և թէ աննպատակ: Նոյն բանն ենք նկատում և բարոյական աշխարհում: Մարդուն ասել թէ նա ազատ է փարւելու րաս կամաց և միաժամանակ արգելք հանդիսանալ նշա գործառնութիւններին, դա միենոյնը կը լինէր, եթէ հաշմանդամից սպահանչէինք նպատակավարմար շարժութեան անել:

Փորձառու մարդը նախ կը մտածէ գտնել ամեն աեսակ հանապարհներ իւր նպատակին հասնելու և իւր աշխատանքն ասպահովելու համար, անյաջողութիւնները վերադրելով իրա անփորձութեանը: Բայց եղբ շուտով նկատեց, որ անկարող է հասնել իւր նրա պատակին և այն էլ ոչ թէ շնորհիւ չանքերի ու ցանկութեան բացակայութեան իրա կողմից, այլ հէնց իրա հնթաղբեալ հովտնաւորողի դիմաւորեալ ուղղնակութիւնների շնորհիւ, — այն ժամանակ նաև բարոյապէս լրւած ու վիրաւորւած կրտսենուածի և կրտսայ ո՛չ այնտեղ, որտեղ ինքն էր կամենում, այլ այնտեղ, ուր տանում են նրան նոյն այդ հովտնաւորողները: Նա ոչ միայն ֆիզիքապէս, այլ և բարոյապէս դառնում է մի կրտսորական գործիք «իրենից ուժեղների» ձեռքին:

Յարարերական այդ մթնոլորտում թերութիւնների ու բացասական գործունեալութեան բոլոր յան-

ցանքը պիտի լնկնի ոչ թէ ենթակաների, այլ ինքնիշխան կառավարիչների վրայ: Պարզ բան է, որ անշնորհը վարպետի ծեռքում ամենալաւ գործիքն անգամ ոչինչ չի շինի:

Իւր գրութիւնը բարելաւելու անընդունակ ճառագլւած մարդը չէ կարող ինքնավասահ լինել, այլ կորցնում է ինքն իւր աչքում իրա բոլոր նշանակութիւնը, լքում և գտանում մի կամազուրիկ արարած: Այդպիսին այլեւ ոչ մի օգուտ չի բերիլ հասարակութեան, որի մզ գտնելում է:

Ի պահանջել հարկին նա կարտայացաէ սարկութեան, բայց ոչ ազատութեան հողին... Դրանք ընդունակ են միայն հնագանդւելու, զլուխ ճկելու, այլոց կամքին անմոռնունչ հպատակւելու, բայց ոչ ուրիշներին առաջնորդելու:

Մեր կարծիքով, բոլոր վերոգրեալները լիովին համապատասխան են մեր ժողովրդական ուսուցչի ինչպէս հասարակական, այգպէս և մանկավարժական գործունեութեանը: Մեր այդ ուսուցիչների խրցնալի կեանքը բնորոշելու համար աւելի քան իգէպ են Պօղոս առաքեալի հետեւելու խօսքերը. «Վիշտա յաղղէ, վիշտ հեթանոսաց, վիշտ խուռ եղբարց...» Ի չանս և ի վաստակս, ի քաղց և ի ծարաւ, ի ցուրտ և իմերկութիւն» եւ, իրօք, ինչե՛ր ինչե՛ր չեն քաշում մեր խեղճ գիւղական ուսուցիչները՝ բիւրօկրատիայի ծեռից: Նրանց ամեն մի քայլափոխում հալածում է անաւանելի նիւթական նեղութիւնը, նրանց

տանջում է ագէս ամբոխը, որի կենդանի ողջակէզնէրն են նրանք, նրանց քարկոծում են մեր երկրի ուժեղները, որոնք սովոր են իրենց անւանել ինտելլիդենաներ։ Համարեա միշտ և ամենու ընք նրանք շքապատաժ են փշով ու տառասկով։

Այսաեղ յակամայից յիշում եմ մեր յարդելի և կիալինին (նա, կարծեմ, մանկավարժ չէ), որը ուղիղ երեք տարի սրանից առաջ փայլուն զյոներով նկարազրում էր մեր ժողովրդական ուսուցչի տխոր վիճակը, «Նօվօչէ. Օթօզրէնիսյում»։

«Եթէ կայ մեկը, ասում է նա, որի կեանքը կարելի է անւանել ազօտ, ասոն, ախուր անդաստան, դա անպայման մեր ժողովրդական ուսուցչի կեանքն է։ Բոլորովին անջատւած իրեն շրջապատող հասարակութիւնից, բացառապէս շարօնների խխատիրագործմամբ կաշկանդաւած, զրկւած նոյն խսկ իւր եսի, իւր անհատականութիւնն արտայայտելու ամենահեռաւոր իրաւունքներից, զրւած այնպիսի սպայմանների մէջ, որով նրա սրբազն, լուրջ զործը դառնում է անխուսափելիօքէն հասարակ, մերենայական չինովնիկական մի մեռած զործ, — այդ թշւառ աշխատաւորն ինքը կակսի յշյոր կտրել իր աշխատանքի բեղմնաւորութիւնից։ Կորյոնելով հաւասար դէպի իւր կարողութիւնը՝ նա ընկճւում է, ուժաւապառւում, մահացնում է ու դժունացնում ժողովրդական լուսաւորութեան սուրբ զործը և ժողովրդի աջում ընկշնում է դպրոցի վարկու եւ նա ոչ մի մեղք չունի

այդ բանում։ — Տւէր նրան հնարաւորութիւն ծանաչելու իրան, ըմբոնելու իւր հասարակական դերը, մարդ զգալու իրան, — մարդ, որ ատմէնալուրջ պարտականութիւններ ունի դէպի հասարակութիւնն ու պետութիւնը։ — և այն ժամանակ ամենայն իրաւամք հարց տւէր՝ ինչպէս թարտքել մեր ժողովրդական դպրոցը։ Վերին ասախինանի լուրջ այդ հարցին, սակայն, շատ գժւար է պատասխանելը, քանի գեռ ժողովրդական լուսաւորութեան զործը բարելաւելու կարող զիսաւոր արգիւնաբերող ցմքը, ուսուցիչը կը մնայ անյայտութեան ու թշւառութեան մէջ։ Նրան զգացնել տւէր, որ ինքը մարդ է և նա կօպնի ծեղ զգացնել եղանակով լուծելու իր համար կենապարզ ու հեշտ եղանակով լուծելու իր համար կենապարզ ու կենդանի այդ հարցը, որին անկարազ կը լինին լուծել կարինեաացին հաղութաւոր մանկավարձներն իրենց ձգաւուներով։ Մեր ուսուցչական դասի մէջ ընդհանրապէս և ժողովրդական ուսուցիչների մէջ մասնաւորապէս ընկերականութիւնը խխատ թոյլ է, լատ որում և ուսուցիչների մէջ ոչ մի միութիւն է, լատ որում և ուսուցիչների մէջ ոչ մի միութիւն է, չկայ ընդհանուր շահերի տեսակետից։ Խսկ երր չկայ միութիւնը, տպա ուրեմն խօսք անգամ չէ կատարող ինել որեւէ հաւաքական խորհրդածութեան մասին ուսւ դասակարգի շարունակ տնօղ կարիքների սին ուրեմն և այդ դասակարգի շահերը խօսքով շուրջը, ուրեմն և այդ դասակարգի շահերը խօսք կամ զործով պաշտպանելու մասին էլ խօսք չէ կարող լինել։

Դիսաերկերզը այդպիսիների համար է ասել՝

Ախղճում եմ ես այն թշւառին, որը ընկերների հետ
միանալու կարիքը չի զգում»:

Օրինակ, մեր դիւզական հասարակութեան, դիւ-
զական կառավարութեան և մանաւանդ անաբանդ
կալւածատէրների վերաբերմունքը գէպի դիւզական
ուսուցիչը անհրաժեշտ է զարձնում դիւզական ու-
սուցիչների համախմբումը մի ուսուցչական միու-
թեան*) գրօշի ներքեւ։

Այս կամ այն կալւածատիրոջ բանոր մի հրա-
մանի հիման վրայ ուսուցչին մի գպրոցից միւսը քը-
շելու հնարաւորութեան կենդանի և ամենքի համար
դօրեղ փասար բաւական է, ինքնլսախնքեան, որ կա-
րելի լինի լուեցնել նրանց։ Ժողովրդական ուսուցիչը
մի պարզ խաղաղիկ է կամակոր կալւածատիրոջ ձեռ-
քին, — առ մեր կուլառւրսկան-հասարաւկական ամենա-
փառահեղ պատկերն է! Գիւղ. իշխանութիւնների
հետ ընդհարւելիս էլ գիւղ. ուսուցիչը բոլորովին մի-
ոյնակ է և անօդնական։

*) Մեզանում այդպիսի մի միութեան վորձ ար-
ւեց, բայց որովհետև գործին նախաձեռնողները նեղ-
կուսակցական նախապաշարմունքներից տարւած՝ ու-
ղում էին կրթական գործը գոհաբերել թայֆայական
գծուծ շահերին, ուստի և այդ Միութիւնը անկարող
հանդիսացաւ լիակատար հաւատք ներշնչել բոլոր հայ
ուսուցիչների մէջ։ Անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն
դարձնել այդ խնդրի վրայ և գործը կազմակերպել նը-
պատակայարմար հիմունքների վրայ. Դա մի հրամայ-
ողական պահպան է ներկայումս մանաւանդ։

Մ. Շոտ

...Մեզանում սովորաբար արամագիր են բար-
գել ժողովրդական ուսուցչի վզին մի շարք պարտա-
կանութիւններ, բայց գրանց հետ չեն տալիս նրան
որևէ իրաւունք։ Ոմանք ցանկանում են, որ ուսու-
ցիչը — գպրոցը պատրաստէր փորձւած արհեստաւոր-
ներ, ոմանք — դիւզականտեսներ, բանչարաբոյժներ,
մեղւաբոյժներ, շերամադորներ. և այն։ Ոմանք էլ
ցանկանում են, որ գպրոցը կոիւ մղեր հարբեցողու-
թեան գէմ... Բայց բոլոր վերոյիշեալներից լետոյ,
կարծում եմ, որ ձեզանից իւրաքանչիւրը կըհամոզէի,
թէ որևէ գպրոցական դասաւանդման մեթօդի սուա-
ւելութեան մասին չէ կարելի խօսել, քանի դեռ մեր
գիւղ. ուսուցիչը (գպրոցի հոգին) թէ իրաւունքներով
և թէ վարձատրութեամբ չի հասարեցրած ա-
րևմտեան նըրոպայի ուսուցիչներին, քանի դեռ
նրա հոգին ազատած չէ մշտատեւ սարսափելի
նիւթական զրկանքների ծիրանից, քանի գեռ մեր
ժողովրդական ուսուցիչները չեն ստանալ գէթ 700—
1200 բուբիկ ոռնիկ։

Անարդար և միանգամայն շատ լիմար բան կը-
լինի, եթէ ոռւսական յառաջիկայ պարլամենտում
ոռնիկներն աւելացնելիս ի նկատի չառնւին և ներկայ
գիւղ. ուստի անցեալ ձառայութիւններն էլ կենսա-
թոշակի համար։ Զակար է մոռանալ, որ այդ ուսու-
ցիչներն ահազին դեր են խաղացել ազատազրական
շարժման մէջ։ Նրանց և նրանց յանձնած գպրոցների
շնորհիւ էր, որ մեր պարբերական հրամարակութիւն-

ներն ակսօր տպւում և տարածւում են ոչ թէ տասսնեակ կամ հարիւրաւոր օրինակներով, ինչպէս 30 տարի առաջ էր, այլ հարիւր-հազարներով և նոյն իսկ միլիոններով: Ես հաւասարած եմ, որ մեր Դուման լուրջ ուշազրութիւն կրգարձնի ամենուրեք դպրոցներ բանալու և նրանց ապահովելու խնդրին վրայ Եկատերինա Մ'եծը իդուր չէր, որ միայն դպրոցով էր կառենում ստեղծել ամի նոր տեսակի մարդկութիւնն:

Հէնց մեզանում, ֆինլանդիայում, ինչպէս վկայում են շատերը, ժողովրդական դպրոցներում յահախ գառախօսում են համալսարանաւարանները և ստանում են մեր գիմնազիանների ուս. ոռնկին հաւասար վարձարութիւն: Միացեալ նահանգներում ժող. ուս. ստանում է այնքան, որքան և մեր պրօֆէսօրները, ոմանք էլ աւելի, քան մեր ամենաարժանաւոր պրօֆէսօրները:

Բազմաթիւ փասաեր ապացուցանում են, որ թէև յահախ ոյժն է յաղթում այս աշխարհում, բայց ամենահասասատուն յաղթութիւնը մեռք է բերում միայն խելքով և դիտութեամբ: Քաղաքակրթութիւնը անկործանելի է, թէև նրա յառաջխաղութեան մէջ երբեմն տեղի են ունենում բնդհասաւմներ և լոռութիւն:

Մէնք երբէք չպէաք է մոռանանք, որ հաստատ կամքը՝ բանականութեան ու դիտութեան զօրութեամբ կարող է յաղթահարել ոյժին:

Այդ բանը շատ լաւ հասկացանք մէնք ձապօնիայի դէմ մղած անյաջող պատերազմից յետոյ, որ անհրաժեշտ է գիմել ուսանող երիտասարդութեան և ուսուցիչներին՝ առաջիններին խրախուսելով ու գէպի ուսումնարան մղելով, իսկ միւսներին—գէպի ամբիօն:

Մէնք հասկացանք, այս' որ մեր զօրանոցներն էլ այն ժամանակ են միայն գառնում մեր պետական զօրութեան խկական բուրասանը, երբ այսաեղ կրմանին դպրոցի յարտառ գասլնթայքն անցած աղպային ծաղիկները:

Այդպէս ուրեմն, կրկին կրշեցաեմ, որ ևս հաւատում եմ միայն լուսաւորութեան և բարյականութեան վերջնական յաղթանակին: Ես հաւատում եմ որ յետագայ նորակազմ Դումայի բացմամբ կրյաւերժանայ մեր խեղճ ուսուցիչների թշշառութեան ու անփաղահովութեան չքայցումը և մեր դպրոցների բարելաւումը արեւմեան Եւրոպայի դպրոցների նման:

Շարունակ կրկնել միւսնոյն բանը, թէ պետութիւնը փող չունի, սխալ կրինի: Եթէ պետութիւնը համեմատելու լինինք մի գերգասատնի հետ, կրտեսնենք, որ գերգասատնն ասպրում է իւր կարողութեամբ: Երեխան ձնում-մեծանում է, նրան տալիս են գիմնազիա, նրան մարգամէջ հանելու համար զուրս են զալիս իրենց կաշւեից, կրնասառմ են ուրիշ ծախսերը, որոնում են եկամտի նորանոր աղբիւրներ: Ալպէս պիտի լինի և պետութեան մէջ: Երբ հա-

մողւինք այդ բանում ու զիտակցենք այդ կարիքը
2—300 միլիոն ճարելի գժարար չի լինի:

Ներեցէք, սիրելի ընթերցո՞ղ որ այսքան երկար
դրազեցրի Ձեզ մեր զիւղական ուսուցիչների վիճա-
կով. բայց բանք նրանումն է, որ մեր կեանքն այն-
պէս է խճճւել ու մենք այնպէս ընաելացել հնք զը-
րան, որ շատ գժւար է լինում պարզ տեսութեամբ
զանազանել կեանքի իսկական աղամանիք լղիտած
տ-
պակուց, իրերի արժէքը չիմացող մարդն յանախ իւր
կեանքը զոհում է անսրժէք առարկաներին և իւր
ձեռքով է պատրաստում իրա գժբարառութիւնը:

Իմ անզօր ծայնի վրայ ես կաւելացնեմ «Ազ-
գային Լուսաւորութեան Գործիչների» յուշիները
որ տպւած է «Սրին Օտեչեստվո»-ի 1905 Մարտի
20-ի համարում: Ահա թէ ինչ են զրում նրանք.

«Մեր բիւրօկրաստական խարխուլ կարգերի ու
մեր կեանքի նոր պահանջների միջև եղող հակասու-
թեանն վարուց յայտնում է ժողովրդի անձայր թրշ-
ւառութեան շարժառիթք: Բայց դա վերչերս այն-
պիսի չափերի է հասել, որ նրա բնաշնչման ամեն մի
յապարածք կորուստ կրապառնայ պեսութեանը: Մեր
հասարակական և պետական կեանքի արմատական
բարեփոխման ժամանակն հասել է. այժմ իւրաքան-
չւը բարպարացու վրայ սրբազն պարտականութիւն
է ընկնում՝ ցոյց տալ մեր կեանքի հիւանդոս կող-
մերը և նրան բժշկելու միշոյները:

Մենք ժողովրդական ուսուցիչներս ու ուսուց-

չուհիներս և ժողովրդական լուսաւորութեան գործի
այլ սպասաւորներս, պարաք ենք համարում պարզա-
բանել ժող. լուս. գործի արդի վիճակը, որին այնքան
մօտ ենք կանգնած: Ոչ միայն յառաջադէմ պետու-
թիւնների, այլ և մեր հասարակութեան մէջ վաղուց
արդէն ժող. կուսաւորութիւնն ընդունւած է որպէս
առաջնակարգ կարևորութիւն ունեցող պետական մի
գործ: Թէ՛ զրականութեան մէջ և թէ ամեն տեսակ
հասարակական ժողովներում վաղուց արդէն լուսում է
ժողովրդի ազիտութեան դէմ կույելու մարտահրաւե-
րը: Վաղուց արդէն մեր ինտելիգենցիան կատարեալ
անձնւիրութեամբ ծգտում է արծաղանք տալ այդ
մարտահրաւ էրին:

Այսինչ ժողովուրդը մինչև օրս էլ գեռ խար-
խափում է խորին ազիտութեան մէջ: Մենք լուսա-
ւորութեամբ յետ ենք մնացել ոչ միայն Եւրոպացի-
ներից, այլ և մի քանի ասիական պետութիւններից:

Մեր գալրոցների թիւը գեռ շատ հեռուն է մեր
հանրային կրթութիւնն ապահովող թւից. գոյութիւն
ունեցող գալրոցների կաղմն ու պայմանները չափա-
զանց ողորմելի արդիւնք են ցոյց տալիս:

Անզրուսու մնարանային կրթութիւնն էլ մեզա-
նում գտնւում է սաղմնացին զրութեան մէջ: Չափա-
զանց ձանք է մեղ խոստովանել մանաւանդ, որ մեր
ժող. լուսաւորութիւնն այդպիսի խղճալի վրութեան
մէջ է գտնւում այն ժամանակ, երբ ինքը ժողովրդ-

զբ զզվում է իւր աղիսութիւնից և անդուսպ կերպով ծրգառում դէպի լուսաւորութիւն:

Մեր ժող. լուս. գործի յետամնացութիւնն արդիւնք է մեր արդի կարգերի: Բաղմաթիւ փաստերը և համեմատութիւնը մեզ բերում են այն հաստատ համոզման, որ բիւրօկրատիան դիտակցութար արգելք է հանդիսանում ժող. լուս գործին: Նու դիտմամբ պաշտպանում է սովորութիւնը, որպէս իւր գոյութեան հիմնաքարը: Երկու միջիարգանոց բիւչէից նա հազիւ $\frac{1}{100}$ մասն է յատկացնում ժող. լուս. գործին և զեռ այդ ողորմելի նպաստի մի մեծ բաժինն է դնում է եկեղեցական-ծխական գոլրոցների վրայ, որոնց գոյութեան նպատակն է կատեցնել ժող. լուս. ընթացքը և դաստիարակութիւնն ու կրթութիւնը աւելի լաւ ծառայեցնել կառավարութեան նպատակներին: Նա զանազան պատրւակներով լսմառօրէն, գաղանի և յայտնի միջոցներով արգելք է հանդիսանում և դէմսկից, և քաղաքային հասարակական հիմնարկութիւններին, և մասնաւոր ընկերութիւններին, և առանձին անհատների գործունէութեանը ժող. լուս. ասպարիզում: Ամենանեղ պայմանների մէջ է զբել գոլրոցներ, գրադարաններ, գտարնթացքներ և առհասարակ կրթական հիմնարկութիւններ բացելը:

Բացի ընդհանուր գրաքննութիւնից, որ այնքան խիստ է, նա սահմանել է մի ընդհանուր ցենզուրա՝ ոչ միայն աշակերտական գրադարանների, այլ և ժո-

դոլրդական և ուսուցչական գրադարանների գրքերի վրայ:

Պարագիր հաստ ցուցակները, որոնք լիքն են անբովանդակ կամ կատարելապէս հնացած հրատարակութիւններով, դոյց են առլիս սյու ցենզուրի արժէքը:

Բիւրօկրատիան մեր բոլոր կրթական հիմնարկութիւնները ենթարկել է ոչ միայն կրթական վարչութեան, յանձին ժողովրդական գոլրոցների տեսուչների և վերատեսուչների, ամենախիստ հսկողութեան այլ և ամեն կարգի հոգեորականութեան, չինովնիկների, ներքին գործոց նախարարութեան պաշտօնեաների—սկսած նահանգապետներից մինչեւ ուրեազնիկը, —և յահախ նցյնիսկ մասնաւոր անձանց հսկողութեանը:

Բիւրօկրատիան հետպհետէ հեռացնում է կրթական ասպարէզից և առհասարակ լուս. գործից այն մարդկանց, որոնք աչքի են ընկնում իրենց ընդունակութիւններով, եռանդով և կրթութեամբ: Եւ այդ բարդ ու կարեռը գործը նա լսնձնում է երկուու, անընդունակ, նախածեռնող հոգուց զուրկ կիսամիջիթարդիկանցներով: Կամենալով բռնի կերպով ուսուցանել և օրթոգրափանութիւնը առարձել օտարալաւանների մէջ, բիւրօկրատիան գոլրոցն էլ գարձեց մի գործիք՝ հակարգիստօնէական ու հակամարդկասիրական իւր նպատակների համար ու այլպիսով գառնացքեց պէտութեան ազգաբնակութեան մի խոշոր մասի սիրար, մղելով նրանց դէպի աղիսութիւնը...

Ում յայտնի չէ բիւրօկրատիսյի դիրքը դէպի
ժող. լուս. գործը, ինչպէս նաև դէպի ժող. ուսու-
ցիչները. ուստի և աւելորդ ենք համարում երկար
կանգ առնել այդ կէտի վրայ:

Ժողովրդական լուսաւորութեան բարգաւաճման
առաջ ուղղակի խոչընդուներ յարուցանելուց չոկ բիւ-
րօկրատական կառավարութիւնը յայտնուում է և ան-
ուղղակի պատճեառը ժող. ազիտութեան,—նա ժողո-
վրդին դրել է նիւթական այնպիսի մի կացութեան
մէջ, որ խեցն ժողովուրդը միշտ ծանրաբեռնաւած է
մի կտոր հացի հոգսով և հնարաւորութիւն չունի
փոքր ինչ էլ իւր սեփական լուսաւորութեան մասին
մտածելու:

Խորապէս համոզւած լինելով, որ անհրաժեշտ
է ստեղծել ազատ ու դեմոկրատ դալորդներ, մէնք,
ուսուցիչներս և ուսուցչուհիներս և բոլոր այլ սպա-
սաւորներս դպրոցական ու անդրուսումնարանային
դուսաւորութեան գործի անկետածգելի ենք համարում
բարձր, միշին և ստորին կրթական գործի բարենո-
րոգումը, աչքի առաջ ունենալով ժող. զանդւածի է-
տիան շահերը:

Ա.—Բոլոր դպրոցներն այնպէս պիտի դաստար-
եին, որ բարձրակարգ համակրական դպրոցները ան-
միջական շարունակութիւնը լինին ստորինի:

Բ.—Մաղնել բնդհանուր և ծրի կրթութեան
սիստեմը.

Գ.—Հաստատել համակրթական, աշխարհիկ
(laigue) բնոյթով ուսումնականներ ազատ դասաւաճ-

դութեամբ ու տեղական ազգաբնակութեան մայ-
քենի լեզուվ:

Դ.—Ժող. կրթութեան գործի կառավարու-
թիւնն յանձնել հասարակական հիմնարկութիւններին
որտեղ ներկայ լինին և ուսուցչութեան ներկայացու-
ցիչները:

Այդ բարենորոգումները զլուխ կրգան այն դէպ-
քում միայն, երբ մի շարք էտիան միջոցներ ծեռք
կառնեին բարւոքելու աշխատաւոր դասակարգերի
անտեսական վիճակը:

Բոլոր վերոյիշեալներն իրազործելու համար ան-
հրաժեշտ է:

1) Անձի և բնակարանի անձեռնմխելիութեան
կատարեալ երաշխաւորումն:

2) Աղատութիւն խղճի, խօսքի, մամուլի, գու-
մարման և միութիւնների:

Իշխանութեան ներկայ օրգաններն անկարող են
բաւարարութիւն առաջ կեանքի պահանջներին, ուստի
և ներկայ մոմենտի ամենաէական պահանջն է ներ-
կայանամ ժողովրդի ներկայացուցիչների գումարումը՝
ընդհանուր, ուղղակի, զարտնի և հաւասար բնտրա-
կան իրաւունքների հիման վրայ, առանց խտրու-
թեան սեռի, աղջութեան և դաւանանքի:

Ըստափոյթ վերացումն արտակարգ գրութիւն-
ների և ազատութիւն քաղաքական ու կրօնական
բանտարկեալների:»...



h
i
j
k
l
m
n
o
p
q
r
s
t
u
v
w
x
y
z

ՄԵՐ Ա.ՇԽԱԿԹԻՒՆԵՐԸ

Ա. — Ինքնուրոյն

1. Հնչակ	,, 10	կոտ.
2. Դաս	,, 10	"
3. Սև հարսանիք	,, 10	"
4. Քիւրտ Պէկ, Բ. ապադրութիւն	,, 15	"
5. Աղամը, Բ. ապագը.	,, 25	"
6. Անաստուածները	,, 40	"
7. Քրդերը տաճկաց-հայաստանում	,, 75	"
8. Մերձեցում	,, 20	"

Բ. Թարգմանական

9. Կորչին Սօցիալ զեմօկրատ., Բրակէ	,, 12	"
10. Ի՞նչ է հայրենիքը, Վասիլ'կ	,, 15	"
11. Գիւղ. ուսուց. ձայնը, Կապանաձէ	,, 15	"
12. Ժան Ռուլ, Մերժօ, զրամա 5 զործ. (անտիս.)		
13. Ազատութեան արշալուս. 5	,, , Լը Շարի	
14. Եօթանասնակոնը, Ան-սկիյ, սլիես 1 զործ անո.		

Դիմել՝ Տիֆլիսъ, М. Шводъ, Ртищевская № 3.

Գումարով գնողներին բաւարար զեղչ.

«Ազգային գրադարան



NL0216349

47.182